



*Համարը* ՀՕ-276  
*Տիպը* Օրենք  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2002.01.15/4(179) Հոդ.10  
*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով  
*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 01.01.2002

*Տեսակը* Ինկորպորացիա  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 14.12.2001  
*Ստորագրման ամսաթիվը* 27.12.2001  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 14-ին

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հաստատել 2002 թվականի՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը:

**Հոդված 2.** Հաստատել Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների համալիր ծրագիրը:

**Հոդված 2.1.** Հաստատել 2008 թվականին Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (Հավելված 3-ը կցվում է):  
*(2.1-ին հոդվածը լրաց. 10.06.08 ՀՕ-115-Ն)*

**Հոդված 2.2.** Հաստատել 2012 թվականին Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (Հավելված 3՝ -ը կցվում է):  
*(2.2-րդ հոդվածը լրաց. 22.06.12 ՀՕ-171-Ն)*

**Հոդված 2.3.** Հաստատել 2014 թվականին Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (4-րդ հավելվածը կցվում է):  
*(2.3-րդ հոդվածը լրաց. 21.06.14 ՀՕ-81-Ն)*

**Հոդված 2.4.** Հաստատել 2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ժամանակավոր ծրագիր)՝ համաձայն 5-րդ հավելվածի:  
*(2.4-րդ հոդվածը լրաց. 06.07.17 ՀՕ-116-Ն)*

**Հոդված 2.5.** Հաստատել 2018 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ժամանակավոր ծրագիր)՝ համաձայն N 6 հավելվածի:

(2.5-րդ հոդվածը լրաց. 29.08.18 ՀՕ-373-Ն)

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ռ. Քոչարյան**

Երևան  
27 դեկտեմբերի 2001 թ.  
ՀՕ-276

**ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐ  
ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՆԵՐԱԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ՊԱՆՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

**Համալիր և տարեկան ծրագրերը ներառում են՝**

1. Ներածություն.
2. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր ծրագրի նպատակը և խնդիրները.
3. Տեղեկանք Սևանա լճի ու դրա ջրհավաք ավազանի ջրային պաշարների, կենդանական և բուսական աշխարհի, էկոլոգիական ենթահամակարգերի մասին.
4. Ծրագրի գործողությունները և միջոցառումները.
5. Սպասվող արդյունքները.
6. Ջրային ռեսուրսների և կենսապաշարների օգտագործման չափաքանակների սահմանումը.
7. Ծրագրի մոնիթորինգը և վերահսկողությունը:

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Սևանա լիճը Հայաստանի բնության հրաշալիքներից և հայ ժողովրդի ազգային խորհրդանիշներից է, որն ունի հանրապետական և տարածաշրջանային բացառիկ տնտեսական ու էկոլոգիական նշանակություն:

Սևանա լճի ջրհավաք ավազանը, համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի, ընդգրկում է Սևանա լճի բուն ջրհավաք ավազանը (շուրջ 4890 կմ<sup>2</sup>) և Արփա գետի ջրհավաք ավազանի վերնագավառը՝ Կեչուտի ջրամբարից հոսանքն ի վեր ընկած տարածքներն ու Որոտան գետի ջրհավաք ավազանի վերնագավառները՝ Սպանդարյան ջրամբարից հոսանքն ի վեր ընկած տարածքները, որոնց սահմանները դեռևս վերջնականապես ճշգրտված չեն: Սևանա լիճը Հայաստանի ջրային հաշվեկշռում բացառիկ տեղ է գրավում: Մինչև լճի մակարդակի արհեստական իջեցումը այստեղ էր կուտակված հանրապետության ջրային պաշարների ավելի քան 80 տոկոսը (58,5 մլրդ մ<sup>3</sup>), որը 5 անգամ ավելի է հանրապետության մակերևութային ջրային հոսքից և մոտ 35 անգամ ավելի է մնացած ջրամբարներում կուտակված ջրային պաշարներից:

Սևանա լիճը իր եզակի ու հարուստ ֆլորայով և ֆաունայով արժեքավորվում է հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում, մասնավորապես՝ դրա ձկնային պաշարները: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության, էներգետիկայի և տնտեսության այլ ճյուղերի զարգացումը սերտորեն կապված է Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործման հետ, հատկապես նրա քանակական և որակական հատկանիշների հետ:

Սևանա լիճը իր ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ցուցանիշներով համարվում է խմելու համար բարձրորակ բնական ջրամբար և այդ տեսակետից՝ ՀՀ ռազմավարական գերակայական նշանակություն ունեցող բնական պաշար:

Յավոթ, սկսած 30-ական թվականներից Սևանա լճի ջրի ինտենսիվ և ոչ հաշվենկատ օգտագործման հետևանքով խախտվել է լճի հավասարակշռությունը՝ առաջ բերելով ջրակենսաբանական պրոցեսների և ամբողջ էկոհամակարգի խաթարում, որի շարունակման դեպքում վտանգվում է Սևանա լճի՝ որպես քաղցրահամ ջրամբարի գոյությունը:

Հաշվի առնելով Սևանա լճի էկոլոգիական վիճակի բարելավման հրատապությունը՝ ՀՀ Ազգային ժողովը 2001 թ. ընդունել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է, որ Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում մարդկային ցանկացած գործունեություն պետք է իրականացվի Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր և տարեկան ծրագրերի հիման վրա (13-րդ և 14-րդ հոդվածներ): Վերջինների պահանջների հիման վրա ՀՀ կառավարությունը մշակել և ՀՀ Ազգային ժողովի հաստատման է ներկայացրել սույն

ծրագրերը:

Համալիր և տարեկան ծրագրերի ռազմավարությունը և դրանց իրականացման անհրաժեշտ գործողությունները սահմանվել են համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-15-րդ հոդվածների:

Ծրագրերի նախապատրաստման համար հիմք են ծառայել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում» և «Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողություններ» ծրագրերը, Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդրի լուծման վերաբերյալ ԽՍՀՄ ԳԱ լճաբանության ինստիտուտի կողմից մշակված վերլուծություններն ու ծրագրերը: Ծրագրի միջոցառումների ցանկի պատրաստման համար հիմք են ծառայել ՀՀ տարբեր նախարարությունների, գերատեսչությունների, ինչպես նաև գիտահետազոտական կազմակերպությունների կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացված ծրագրերը և առաջարկությունները:

**2. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈԶԱՍԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Ծրագրի հիմնական նպատակն է Սևանա լճի, որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի, պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգի բնականոն ներդաշնակ զարգացման և կայուն օգտագործման ապահովումը:**

*Ծրագրի խնդիրներն են՝*

- համալիր միջոցառումների ներդրամբ Սևանա լճի մակարդակի իջեցման կանխարգելումը և դրա մակարդակի առնվազն 6 մետրով բարձրացման ապահովումը՝ որպես լճի ջրի նախկին քանակական և որակական ցուցանիշերի վերականգնման և էվտրոֆիկացիայի կանխարգելման նախապայման.
- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում բնօգտագործման նորմավորման ու կանոնակարգման միջոցով լճի էկոհամակարգի և դրա առանձին բաղադրիչների վրա անթրոպոգեն բացասական ներգործությունների (այդ թվում՝ աղտոտվածության) նվազեցումը, դրանց հետագա դեգրադացիայի կանխարգելումը.
- Սևանա լճի ջուրը՝ որպես խմելու ջրի օգտագործման աղբյուրի պահպանության ապահովումը.
- ձկնային պաշարների վերարտադրության ապահովումը.
- ռեկրեացիոն (հանգիստ և տուրիզմ) տնտեսաճյուղի արդյունավետ զարգացումը.
- լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, հազվագյուտ, էնդեմ և գիտական ու տնտեսական բարձրարժեք տեսակների պահպանման, վերականգնման և վերարտադրման ապահովումը.
- կառավարման համակարգի բարելավումը.
- ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծումը:

**3. ՏԵՂԵԿԱՆՔ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՈՒ ԴՐԱ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ, ԿԵՆՏՐԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգը հազարամյակներ շարունակ հանդիսացել է հայ ժողովրդի կենսագոյության հիմնական նախապայմանը և ներկայումս էլ ընդգրկված է մարդու հասարակական-տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում:

Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգի օգտագործումը հիմնականում ընթացել է տարերայնորեն, իրավական դաշտի անկատարության, լանդշաֆտների տարածագործառնական ոչ ճիշտ պլանավորման, ինչպես նաև դրանց գիտական հիմնավորումների բացակայության պայմաններում, հատկապես լճից ջրային պաշարների անհեռատես օգտագործման հետևանքով: Դրանց արդյունքում Սևանա լճի էկոհամակարգը հայտնվել է անբարենպաստ և էկոլոգիապես անհավասարակշիռ իրավիճակում, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով.

**3.1. Սևանա լճի ջրային պաշարների անհեռատես օգտագործումը**

Նկատի ունենալով Սևանա լճի ջրային հարուստ պաշարները՝ դեռևս երեսունական թվականներից հանրապետության տնտեսության համար էներգետիկ բազա ստեղծելու, ինչպես նաև Արարատյան գոգավորության անջրդի հողերի յուրացման (մոտ 100 հազ. հա) նպատակով մշակվեց Սևանա լճի ջրերի օգտագործման համալիր սխեման, որի հիմքում դրված էր Սևանա լճի ջրի դարավոր պաշարների ինտենսիվ օգտագործումն էներգետիկ և գյուղատնտեսական նպատակներով, լճի մակարդակի իջեցմամբ նրա հայելակրճատումը և հատակից (գրունտից) ազատված հողատարածքների ներառումը տնտեսության ոլորտ: Սկսած 30-ական թվականներից մինչև այսօր այդ ծրագրի իրականացման հետևանքով օգտագործվել է ջրի ծավալի գրեթե 44 տոկոսը կամ 26 մլրդ մ<sup>3</sup> (դրա մոտ 65 տոկոսը օգտագործվել է էներգետիկ, իսկ 35 տոկոսը գյուղատնտեսական նպատակներով), մակարդակը իջել է 20 մետրով, լճի

հատակից ազատվել է 25 հազ. հա տարածք, որը գյուղատնտեսական տեսակետից համարվում է ոչ լիարժեք հողատարածք: Լճի ջրերի այդպիսի ոչ հիմնավորված շահագործումը բերեց բնապահպանական տեսակետից մի շարք բացասական երևույթների և գործընթացների զարգացմանը, որոնք չէին կանխատեսված համալիր սխեմայում: Դա վերաբերում է լճում ընթացող մի շարք անցանկալի ջրակենսաբանական, ջրաֆիզիկական և ջրաքիմիական պրոցեսներին, որոնց հետևանքով լճում, սկսած 60-ական թվականներից, սկսվեցին էվտրոֆիկացիայի երևույթներ, որոնց արդյունքում 80-ական թվականներից արդեն նկատվում էր լճի օլիգոտրոֆ վիճակից անցումը դեպի էվտոտրոֆ վիճակի: Վերջինիս վառ վկայությունն է Սևանա լճի և դրա ջրի ներկայիս մի շարք ցուցանիշերի համեմատությունը մինչև մակարդակի իջեցման ցուցանիշերի հետ՝

լճի ներկա մակարդակը 1896.66 մ է, իջել է շուրջ 20մ,  
 մակերեսը 1240 քառ. կմ է, փոքրացել է 180 քառ. կմ-ով,  
 ծավալը 32.5 մլրդ մ<sup>3</sup> է, նվազել է 26.0 մլրդ մ<sup>3</sup>-ով:

Լճի մակարդակի իջեցման հետ նկատվել է ֆիտոպլանկտոնի թվաքանակի և կենսազանգվածի աճ: Ֆիտոպլանկտոնի թվաքանակը փոփոխվել է 485 հազ. բջ/լ-ից մինչև 29 մլն բջ/լ, իսկ կենսազանգվածը 0.58 գ/մ<sup>2</sup>-ից մինչև 15.8 գ/մ<sup>2</sup>: Բացի այդ, խախտվել են լճի ֆիզիկաքիմիական, թթվածնային և ջերմաստիճանային ռեժիմները. օրինակ՝ միջին խորությունը 41մ-ից նվազել է 26մ, թափանցելիությունը՝ 14,3-ից 4,5 մ, թթվածնի քանակը՝ 6 գ/մ<sup>3</sup>-ից 2 գ/մ<sup>3</sup>, միներալ ազոտը՝ 0,003 գ/մ<sup>3</sup>-ից 0,16 գ/մ<sup>3</sup> (իսկ ընդհանուրը 0,07 գ/մ<sup>3</sup>-ից 0,64 գ/մ<sup>3</sup>), միներալ ֆոսֆորը՝ 0,007 գ/մ<sup>3</sup>-ից 0,32 գ/մ<sup>3</sup>: Այս բոլորը վկայում են Սևանա լճի արագ «ձաղկման», էվտրոֆացման և այլ էկոլոգիական անցանկալի բացասական գործընթացների արագացման տենդենցի մասին:

Սևանա լճի 2000 թ. ջրային հաշվեկշիռը ներկայացված է ստորև:

**ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ՋՐԱՅԻՆ ՀԱՉՎԵԿՅԻՐ (մլն մ<sup>3</sup>)**

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը տարվա ընթացքում
<u>Մուտք</u>	
Լիճը թափվող գետեր	մինչև 740.5
Արփա-Սևան թունելով	մինչև 311.1
Տեղումները լճի մակերևույթի վրա	388.0
Ստորերկրյա հոսք	94.2
Ընդամենը	1533.8
<u>Ելք</u>	
Հրազդան գետով	190.0
Գոլորշիացում լճի մակերևույթից	1370.9
Ստորերկրյա հոսք	14.4
Ընդամենը	1575.3
կուտակում (նվազում)	-61.4
Բացարձակ անկապք	19.8
Հարաբերական անկապք %	1.2

Հայտնի է, որ Սևանա լճի ջրային հաշվեկշռի առավել կարևոր բաղադրիչը լճի մակերեսից գոլորշիացումն է: Վերջին հարյուրամյակի ընթացքում մոլորակի ջերմաստիճանը բարձրացել է 0.3-0.6°C և շարունակում է բարձրանալ: Կլիմայի փոփոխման և մթնոլորտային տեղումները: Այդ փոփոխությունները կհանգեցնեն ջրային ռեսուրսների փոփոխության, այդ թվում՝ կլիմայի փոփոխման զուգորդակցումն ինչպես ցամաքից, այնպես էլ ջրային մակերեսից: Հայաստանի տարածքում կլիմայի դինամիկ փոփոխության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակների ընթացքում օդի ջերմաստիճանը բարձրացել է 0.7°C-ով, իսկ մթնոլորտային տեղումների քանակը պակասել է միջին հաշվով 6 տոկոսով:

Սպասվում է, որ ապագայում Սևանա լճի մակերեսից գոլորշիացումը է՛լ ավելի կմեծանա կլիմայական պայմանների փոփոխության պատճառով, քանի որ աշխարհի մասշտաբով ջերմոցային գազերի մթնոլորտ արտանետումների պատճառով տեղի է ունենում կլիմայի համամոլորակային տաքացում:

*Ձեռնարկված միջոցառումները:* Հաշվի առնելով Սևանա լճում ընթացող էկոլոգիական և սոցիալ-տնտեսական խիստ բացասական հետևանքները՝ դեռևս 60-ական թվականներից ՀՀ կառավարությունը մշակել և իրականացրել է մի շարք

միջոցառումներ Սևանա լճի մակարդակը նվազագույնը 6 մետրով բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով 1961 թ. սկսվել է 1981 թ. -ից շահագործման է հանձնվել Արփա-Սևան 48 կմ-ոց ջրատարի կառուցումը, որի շնորհիվ տարեկան Սևանա լիճ է տեղափոխվում մոտ 300 մլն մ<sup>3</sup> ջուր: 80-ական թվերին սկսվել էին Եղվարդի և Մարմարիկի ջրամբարների կառուցման աշխատանքները, որոնք 90-ական թվականներին դադարեցվեցին: Այդ ժամանակահատվածում ստեղծվեցին նաև Արարատյան դաշտի հողերի ոռոգման նոր այլ ջրաղբյուրներ (Մխչյանի, Երասխավանի և մի շարք այլ ջրհան կայաններ, ստորգետնյա ջրհորներ և այլն), կառուցվեցին ջերմային ու հիդրոէլեկտրակայաններ (Սպանդարյանի, Տաթևի և Շամբի հիդրոէլեկտրակայանները, Երևանի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանները) և Հայաստանի ատոմակայանը: Սևանա լճի էկոհամակարգի առողջացման և ոռոգման արդի մեթոդների ներդրման զարգացման միջոցառումների վերաբերյալ (բացառելով լիճ թափվող գետերից ոռոգման համար անմիջական ջրառը) ՍՍՀՄ Կենտկոմի և Մինիստրների խորհրդի 1978 թ. սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի բնական ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման մասին» թիվ 812 որոշմամբ գետերից ջրառի փոխարեն նախատեսվել է կառուցել լճից սնվող 12 պոմպակայան՝ ոռոգելի տարածքներին մեխանիկական եղանակով ջուր մատակարարելու համար: Այս բոլորի շնորհիվ մինչև 1990 թ. Սևանա լճի մակարդակը բարձրացվեց 1,5 մետրով, որը զգալի ներդրում էր էկոլոգիական վիճակի բարելավման գործում: Սակայն 90-ական թվականներին, էներգետիկ, տնտեսական ճգնաժամերի և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, նորից սկսվեց Սևանա լճի ջրի պաշարների ակտիվ օգտագործումը: Այսօրվա վիճակով ոչ միայն օգտագործվել են նախորդ տարիներում արդեն կուտակված ջրային պաշարները, այլև շարունակվում է լճի մակարդակի հետագա իջեցումը: Այս գործընթացի հետագա զարգացումը կհանգեցնի լճի էկոլոգիական վիճակի վատթարացման և Սևանա լճի, որպես քաղցրահամ ջրաղբյուրի, անդարձ կորստյան:

Հարկ է նշել, որ կառավարության թիվ 812 որոշմամբ նախատեսված պոմպակայանների կառուցումը ներկայիս պայմաններում տնտեսապես նպատակահարմար չէ: Դրա փոխարեն անհրաժեշտ է նախատեսել լճի ջրհավաք ավազանի բարձր նիշերում փոքր ջրամբարների կառուցման կամ Որոտան-Արփա-Սևան թունելի ելքի մասում թունելի ջրի բազայի վրա, Օռվինար գյուղի մոտ մեկ պոմպակայանի կառուցումը, որը կփոխարինի ներկայումս գործող և նախատեսվող պոմպակայաններին, ու կբացառվի լիճ թափվող գետերից ջրառը:

**3.2. Սևանա լճի և դրա մեջ թափվող գետերի աղտոտվածության մեծացումը**

Սևանի ավազանի սոցիալ-տնտեսական զարգացման գիտականորեն ոչ հիմնավորված պլանավորումը հանգեցրեց այդ տարածաշրջանի և դրա բնական պաշարների ինտենսիվ յուրացմանը և դրանով պայմանավորված՝ բնակչության արագընթաց աճին և շրջակա միջավայրի ուրբանացմանը, որոնց արդյունքում անհամեմատ մեծացավ Սևանա լճի արդյունաբերական և գյուղատնտեսական աղտոտվածությունը, այդ թվում՝ բնակավայրերի կոմունալ և կենցաղային կեղտաջրերի՝ առանց մաքրման հոսքը դեպի լիճ:

*Շեռնարկված միջոցառումները:* Նշված բացասական երևույթների վերացման նպատակով զգալի աշխատանքներ են կատարվել նաև Սևանա լճի ջրերի աղտոտվածության նվազեցման գործում: Կառուցվել և նախկինում գործում էին մի շարք խոշոր բնակավայրերի մաքրման կայաններ, սկսվել էին Սևանի ավազանի կոյուղու կոլեկտորի կառուցման աշխատանքները, որոնցից առաջինների գործունեությունը դադարեցվել է էներգետիկ ճգնաժամի պատճառով, իսկ երկրորդինը՝ տնտեսական ճգնաժամի և մաքրման կայանների նկատմամբ սկզբունքային տարբեր մոտեցումների ձևավորման հետևանքով:

Մշակվել են ծրագրեր ավազանում գյուղատնտեսության վերակառուցման ուղղությամբ, հատկապես դրանում քիմիական պարարտանյութերի և պեստիցիդների քանակների կրճատման, դրանց՝ կենսաբանական և նորագույն այլ տեխնոլոգիաներով փոխարինման ուղղությամբ:

Վերջին 30-40 տարիների ընթացքում Սևանա լճի ափամերձ գոտում (լճի նախկին հատակ հանդիսացող հողագրունտներում) կատարվել են անտառապատման լայն միջոցառումներ՝ հիմնվել է շուրջ 13 հազ. հա անտառ: Այս միջոցառման շնորհիվ ոչ միայն ամրակայվել են ափամերձ շարժուն գրունտները, այլև նվազեցվել է ավազանի լանդշաֆտների էրոզիոն տարբեր նյութերի ազատ մուտքը Սևանա լիճ, այսինքն՝ կանխվել է լճի աղտոտումն այդ նյութերով: Սակայն վերջին տարիների ծանր տնտեսական պայմաններն ու էներգետիկ ճգնաժամը զգալի վնաս են հասցրել անտառի ափամերձ և ամբողջ ավազանի անտառային էկոհամակարգին, իրականացվել են ապօրինի ծառահատումներ, որի հետևանքով ակտիվացել են էրոզիոն գործընթացները և ավելացել են բացասական տարրերի և հանքային էլեմենտների մուտքը լիճ:

**3.3. Կենսապաշարների օգտագործումը**

Սևանա լճի ջրհավաք ավազանն ունի ինքնատիպ և հարուստ կենսաբազմազանություն: Կարգաբանական առումով կենդանական աշխարհը հետևյալն է. կաթնատուներ՝ 34 տեսակ, թռչուններ՝ 267, երկկենցաղներ՝ 3, սողուններ՝ 17, ձկներ՝ 9:

Ջրային կամ ջրածահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, առափնյա ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ.հա ճահճուտների արհեստական չորացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների

մոտ: Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններ, որոնցից 48-ը բնադրող էին: Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում: 1996 թ. տվյալներով պարկի տարածքում հանդիպող բնադրող թռչուններն են սև փարփարը, կոնչան բադը և հայկական դորը: Վերջինս գրանցված է Կարմիր գրքում՝ որպես սահմանափակ արեալ և առավել խոցելի բնադրավայր ունեցող տարատեսակ:

Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, որոնցից անհրաժեշտ է նշել սպիտակափոր մողեսը, նաիրյան մողեսը, ռոստոմբեկովի մողեսը, հայկական մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իծը:

Երկկենցաղներից առկա են կանաչ դողոշը, լճագորտը և փոքրասիական գորտը:

Ձկներից գրանցված են Սևանի իշխանը իր 4 ռասաներով, սիգը, Սևանի բեղուն, կողակը և լճածածանը:

30-ական թվականներից սկսած՝ Սևանա լճում մարդու կողմից (կանխամտածված) վերաբնակեցվել են մի շարք ջրային կենդանիներ, այդ թվում՝ սիգ ձկնատեսակը (կանխամտածված), լճածածանը և խեցգետինը (ոչ կանխամտածված) և այլն:

Սևանի ավազանի տարածքում հայտնաբերված են 1600 բարձրակարգ բուսատեսակներ, որոնցից 94-ը՝ ծառեր և թփեր:

Սևանա լճի առափնյա գոտին հիմնականում գտնվում է լճի մակարդակից 0-20մ բարձրության վրա և ներկայացնում է լճի մակարդակի իջեցման արդյունքում ազատված գրունտներ՝ շուրջ 25 հազ. հա, որի զգալի մասը ծածկված է արհեստական անտառներով:

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գինու, մարենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոզնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Մարդու կողմից առավել յուրացված է տափաստանային գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր, առանց պահպանելու բուսական և կենդանական աշխարհի պահպանության ազդու և անբարենպաստ անհրաժեշտ նորմերը: Այս գոտում է գտնվում խախտված հողերի զգալի մասը:

Սևանա լճի ջրհավաք ավազանի մերձալպյան և ավազանի գոտին (2400 մ-ից բարձր) ներկայացնում է բարձրլեռնային սարահարթ, որի բուսածածկը կազմված է ավազանի մարգագետնային բուսատեսակներից և հիմնականում օգտագործվում է որպես ամառային արոտավայր:

Ազգային պարկի տարածքում հանդիպում են մի շարք էնդեմիկ և հազվագյուտ բուսատեսակներ, ինչպիսիք են ոզնաթուփ գաբրիելյանի, գազ գյուլչայի, լրջուն սևանի, արոսենի լուրիստական, արոսենի հայաստանյան, կուժկոտրուկ վոլգյան և այլն:

Սևանի ջրհավաք ավազանում (Գեղարքունիքի մարզի սահմաններում) անտառները կազմում են շուրջ 17 հազ. հա, որից 12 հազ. հա-ն արհեստական անտառտնկարկներ են և իրենցից ներկայացնում են տճու, բարդենու, փշատենու, չիչխանի և մի շարք այլ ծառերի ու թփերի համակենցություններ: Առավել խոցելի են բնական անտառկղզյակները, որոնք սպորինի ծառահատումների հետևանքով խիստ վնասվել են:

Սևանի ջրհավաք ավազանում, ինչպես հանրապետության ամբողջ տարածքում, կենսապաշարների օգտագործումը գրեթե անկառավարելի է, սահմանված չեն դրանց օգտագործման ժամկետների ու չափաքանակների վերաբերյալ նորմեր, ստանդարտներ, այդ թվում՝ բնական կերհանդակների և խոտհարքների մեխորացիայի ուղղությամբ: Բնական կենսապաշարների չկանոնակարգված օգտագործման հետևանքով տեղի են ունեցել տարածաշրջանի կենսաբազմազանության զգալի աղքատացում, առանձին տեսակների կորուստ, էկոհամակարգի տեսակային կազմի փոփոխություններ, որոնք հանգեցրել են դրա դեգրադացիայի և արժեզրկման: Սևանի ափամերձ գոտու ջրածահճային տարածքների չորացման, ինչպես նաև նախկին ժայռոտ ափերի վերացման պատճառով ստեղծվեցին խիստ անբարենպաստ պայմաններ տարածաշրջանի թռչնաշխարհի համար՝ 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է էկոլոգիապես անկայուն: Այս իրավիճակից հատկապես տուժել է Սևանի ձկնաշխարհը:

Զգալիորեն փոփոխվել է նաև լճի կենսաբազմազանությունը, կտրուկ նվազել են մակրոֆիտները՝ 900-ից հասնելով 26-ի տ/տարի, դրա փոխարեն աճել է ֆիտոպլանկտոնը՝ 0,3 գ/մ<sup>3</sup>-ից հասնելով 2,4 գ/մ<sup>3</sup>-ի, փոփոխությունների է ենթարկվել գոտային կտոնը՝ 0,45գ/մ<sup>3</sup>-0,70գ/մ<sup>3</sup>, գորբենթոսը՝ 3.38-11գ/մ<sup>3</sup>, ձկնային պաշարների վերարտադրությունը՝ 1000-2400 տ/տարի:

Սևանա լճի վիճակի էկոլոգիապես անբարենպաստ և անկայուն իրավիճակը խիստ բացասական է անդրադարձել նրա աբորիգեն ձկնաշխարհի վրա: Անհետացել են Սևանի իշխանի երկու ենթատեսակները (ռասաները)՝ ձմեռային բախտակը և բոջակը, անհետացման եզրին է հայտնվել ամառային բախտակը, Գեղարքունի ենթատեսակը, կողակը և բեղուն հայտնվել են էկոլոգիական կրիտիկական վիճակում: Դրա հետ մեկտեղ Սևանա լիճ են ներթափանցել նոր օտարածին տեսակներ՝ սիգը, արծաթափայլ ծածանը (կարաս), նեղմատնյա խեցգետինը և այլն, որոնք էականորեն ազդել են լճի կենսաբազմազանության տեսակային և դրական ցուցանիշների վրա:

*Շեռնարկված միջոցառումները:* Վերը նշված բացասական երևույթների հակազդելու համար, սկսած 70-ական թվականներից, ՀՀ կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

- Սևանի իշխանի պաշարների համալրում արհեստական վերարտադրության ճանապարհով, որը շարունակվում է մինչ օրս, և այդ նպատակով պետությունից տարեկան հատկացվում է շուրջ 10 մլն դրամ.

- պարբերաբար իրականացվել են նաև կողակի և սիգի պաշարների համալրում արհեստական վերարտադրության միջոցով:

Ափամերձ գոտում հիմնադրվել է շուրջ 13 հազ. հա անտառ: 2000 թ. Սևանի ավազանի 52 հա տարածքի վրա հիմնադրվել են նոր անտառկուլտուրաներ, իսկ 97 հա-ի վրա կատարվել է անտառկուլտուրաների լրացման աշխատանքներ, 150 հա-ի վրա իրականացվել են անտառի սանիտարական և խնամքի հատումներ՝ 580 մ<sup>3</sup> ծավալով:

2000 թ. Սևանա լճում իրականացվել է 10.5 մլն դրամի արժեքավոր ձկնատեսակների արհեստական վերարտադրություն:

2001 թ. Սևանա լճում թույլատրվել է իրականացնել 600 տ սիգ ձկնատեսակի և 200 տ խեցգետնի արդյունագործական որս:

Անհրաժեշտ է նշել, որ «Սևան» ազգային պարկում և Սևանա լճի ջրհավաք ավազանում կենսաբազմազանության պահպանման, վերականգնման և կենսապաշարների կայուն օգտագործման ու վերարտադրության ոլորտի աշխատանքները խիստ անբավարար են, որը բացատրվում է հանրապետության պետությունից սուղ ֆինանսական միջոցներով, ինչպես նաև այդ ոլորտի կառավարումն իրականացնող իրավասու մարմինների թույլ նյութատեխնիկական և կադրային ներուժով:

### ՍԵՎԱՆԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԵՆՔԸ

Մինչև 1990-ական թվականները ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք նորմատիվ փաստաթղթեր՝ ուղղված Սևանա լճից ջրառի կարգավորման, ինչպես նաև Սևանա լճի ջրավազանում բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կարգավորմանը՝ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը Արփա-Սևան ջրատարի կառուցման մասին և այլ որոշումներ, ՀՍՀՄ Մինիստրների սովետի և ՀԿԿ Կենտկոմի որոշումները Որոտան-Արփա ջրատարի կառուցման մասին և այլն:

1990 թ. ի վեր ՀՀ-ում ընդունվել են բազմաթիվ բնապահպանական նորմատիվ ակտեր, որոնցով սահմանված համապատասխան նորմերով ու կանոններով կանոնակարգվել են նաև Սևանի ջրհավաք ավազանի էկոհամակարգի պահպանության խնդիրները:

Սևանի ջրհավաք ավազանի էկոհամակարգի պահպանությունն ու օգտագործումը կանոնակարգվել են բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներով, ՀՀ ջրային օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ անտառային օրենսգրքով, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքներով, «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության 1998 թ. թիվ 864 որոշմամբ և այլ օրենսդրական նորմերով:

Մինչև «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի ընդունումը Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգի պահպանության հիմնախնդիրները հիմնականում կանոնակարգվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքի առանձին հոդվածներով (3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-15-րդ) կարգավորվում են Սևանի ջրհավաք ավազանի էկոլոգիական կենտրոնական գոտու՝ «Սևան» ազգային պարկի և անմիջական ազդեցության գոտու՝ «Ջերմուկ» և «Ջերմուկ հիդրոլոգիական» պետական արգելավայրերի տարածքների բնապահպանական և բնօգտագործման ոլորտի հարաբերությունները:

Այս օրենքի պահանջների շրջանակներում ՀՀ կառավարության 26.01.1996 թ. թիվ 23 որոշմամբ հաստատվել է «Սևան» ազգային պարկի կանոնադրությունը և «Սևանա լճում արդյունաբերական ձկնորսության մասին» կարգը:

Սևանա լճի ջրհավաք ավազանի մնացած էկոհամակարգերի տարածքների վրա այդ ոլորտները կանոնակարգվել են ՀՀ օրենսդրական տարբեր նորմերով:

Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, Սևանա լճի էկոհամակարգի պահպանության և կայուն օգտագործման գործառույթների նորմավորման նպատակով 2001 թ. Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը:

### ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հաշվի առնելով Սևանա լճի բնապահպանական կարևոր նշանակությունը՝ լճի և դրա առափնյա գոտու բնապահպանական, սոցիալական, տնտեսական գործառույթների համալիր ու միասնական պլանավորման և իրականացման նպատակով դեռևս 1978 թ. ՀՀ կառավարության թիվ 125 որոշմամբ ստեղծվեց «Սևան» ազգային պարկը, որը այդ տարածաշրջանի համար վերոնշյալ գործառույթներն իրականացնող անմիջական պատասխանատու մարմինն էր: Սակայն այն ժամանակ տիրող կենտրոնացված պլանավորման համակարգը թույլ չէր տալիս պարկին լիարժեք իրականացնել իր վրա դրված ֆունկցիաները, նույնիսկ նրա տնօրինությանը չէին հանձնված օրենսդրությամբ իրեն սահմանված տարածքները: Մնացած տարածքները կառավարվում էին վարչական շրջանների գործադիր մարմինների կողմից՝ կենտրոնացված պլանային համակարգի շրջանակներում:

Ներկայումս Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգում բնապահպանական և բնօգտագործման առանձին ոլորտների կառավարումն իրականացվում է ՀՀ պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնց միջև դեռևս չկա իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատում:

Սևանա լճի կենտրոնական գոտու կառավարումը, որպես բնության հատուկ պահպանվող տարածքի, իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ «Սևան» ազգային պարկի միջոցով:

Պարկի տնօրինությունն իրականացնում է Սևանա լճի և դրա առափնյա գոտու (Սևանա լճի հատակից ազատված շուրջ 25.000 հա ցամաքային տարածքները) պահպանությունը, հանգստի կազմակերպման պայմանների ստեղծումը, անտառտնտեսավարման կազմակերպումը և Սևանա լճում արդյունագործական ձկնորսության կազմակերպումը:

Համաձայն կանոնադրության՝ պարկը ամբողջ տարածքի վրա իրականացնում է նաև էկոհամակարգի գիտական ուսումնասիրություն ու բնական պաշարների արդյունավետ օգտագործման մեթոդների մշակում:

Պարկի տարածքի նկատմամբ, համաձայն ՀՀ օրենսդրության, տրված հողօգտագործման, բնապահպանական հսկողության, քաղաքաշինական հարցերի համաձայնեցման և այլ գործառնություններն իրականացվում են տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Սևանա լճի ջրհավաք ավազանի անմիջական ազդեցության գոտում բնօգտագործման կառավարումն իրականացվում է պետական կառավարման տարբեր գերատեսչական մարմինների, մարզպետարանների և համայնքների կողմից:

Այդ գոտու տարածքներում մարզպետների հետ համաձայնեցնելով՝

- գյուղատնտեսական բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից.
- լեռնահանքաարդյունահանումը, հանքանյութերի մշակումը և արդյունաբերական արտադրական տարբեր ճյուղերի տարածքային պլանավորումն իրականացվում է ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից.
- տրանսպորտի և կապի ցանցի զարգացումը և այդ նպատակներով բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից.
- քաղաքաշինական պլանավորումը և տարածքների կառուցապատումը կատարվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից՝ մարզպետների հետ համաձայնեցված.
- էներգետիկ ցանցի զարգացումը և այդ նպատակներով բնօգտագործումը պլանավորվում է ՀՀ էներգետիկայի նախարարության կողմից:

Վերը նշված գերատեսչությունների և մարզպետարանների կողմից իրականացվում է նաև իրենց ոլորտների նկատմամբ գերատեսչական հսկողություն:

Համայնքների վարչական սահմաններում տարածքների բնօգտագործումը, այդ թվում՝ բնապահպանությունը, իրականացվում է համայնքապետի կողմից:

Կառավարման համակարգի վերլուծություննից բխում է, որ տարածաշրջանում գոյություն չունի միասնական կառավարող մարմին, որի հետևանքով շարունակվում է Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոլոգիական վիճակի վատթարացումը:

**4. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի կառավարման համակարգի գործառնությունների, ինչպես նաև նորմատիվ հենքի, գործառնությունների կատարելագործման վերաբերյալ առաջարկները միջոցառումների տեսքով ներառված են Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման միջոցառումների 2002 թ. տարեկան (հավելված 1) և համալիր՝ 2003 թ.-ից մինչև 2030 թ. ծրագրերում (հավելված 2):

Համալիր ծրագրի աշխատանքների իրականացումը հիմնված է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սկզբունքների վրա, և դա միջոցառումների փոխկապակցված ամբողջական համակարգ է, որը նպատակառոտորակ է հետևյալ հիմնախնդիրների իրականացմանը.

- Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացում.
- ջրի մաքրության ապահովում.
- ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծում.
- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն, կենսապաշարների կայուն օգտագործում.
- ռեկրեացիոն (հանգիստ և տուրիզմ) տնտեսաճյուղի արդյունավետ զարգացում.
- կառավարման համակարգի բարելավում, այդ թվում՝ նորմատիվ հենքի կատարելագործում:

***ՄԵԻՆԱ լճի ջրի մակարդակի բարձրացումը***

Լճի ջրի մակարդակի բարձրացման հիմնական միջոցառումներն են՝

- ա) Որոտան-Արփա հիդրոհանգույցի շահագործումը, որի շնորհիվ Սևանա լիճ տարեկան լրացուցիչ կտեղափոխվի մինչև 165 մլն մ<sup>3</sup> ջուր.
- բ) Արփա-Սևան ջրատարի կայուն աշխատանքի ապահովում, որի շնորհիվ Սևանա լիճ կտեղափոխվի շուրջ 300մլն



մ<sup>3</sup> ջուր.

- զ) Եղվարդի ջրամբարի շահագործումը, որի շտրեիվ Սևանա լճից կոնտեյնի մինչև 100մլն մ<sup>3</sup> ջուր.
- դ) Մարմարիկի ջրամբարի նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պատրաստումը.
- ե) Սևանա լճից ջրառի արդյունավետ մեխանիզմների ներդրումը և ջրառի չափաքանակների աստիճանական նվազեցումը:

**Ջրի մաքրության ապահովումը**

Սևանա լճի, որպես խմելու ջրի օգտագործման աղբյուրի, պահպանության գերակայական խնդրի իրականացման հիմնական միջոցառումները նպատակաուղղված են ջրի մաքրության ապահովմանը`

- Սևան, Կամո, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ քաղաքներում և գյուղական խոշոր բնակավայրերում կոյուղու ցանցի ստեղծում.
- Սևանա լճի ջրհավաք ավազանում ջրամատակարարման և կոյուղացման համակարգի ստեղծում.
- Սևանա լճի ջրհավաք ավազանում գոյություն ունեցող մաքրման կայանների վերականգնում և լուրջ մաքրման կայանների ստեղծում.
- գյուղատնտեսության, անտառտնտեսավարման և տնտեսավարման այլ ճյուղերում նոր տեխնոլոգիաների, այդ թվում` ջրօգտագործման, ներդրման միջոցով Սևանա լիճ թափվող ջրային հոսքերի աղտոտվածության նվազեցում.
- բնապահպանական միջոցառումներում և տնտեսության տարբեր ճյուղերում կենսաբանական նոր տեխնոլոգիաների ներդրում` մակերևութային հոսքաջրերի և ստորգետնյա ջրերի աղտոտման նվազեցման նպատակով:

**Ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծումը**

Ջրի մակարդակի բարձրացման և մաքրության ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների համակարգում ներառված է նաև ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծումը`

- բնակավայրերի ջրամատակարարման ցանցի բարելավում.
- ոռոգման համակարգի վերազինում.
- Գետիկի և Ֆիալետովոյի ջրամբարների կառուցում և դրանց ջրերի ուղղորդում Սևանա լիճ.
- գետերի վերնագավառներում ջրամբարների կառուցում, ինչպես նաև Որոտան-Արփա գլխամասային ջրընդունիչ կառույցից ջրառի իրականացում` նպատակ ունենալով ապահովել գետերում ջրի անհրաժեշտ հոսքի առկայությունը և ոռոգման համակարգի ինքնահոս ջրամատակարարումը:

**ՄԵԻՒՆԱ ԼՃԻ և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանումը, կենսապաշարների կայուն օգտագործումը**

Այս հիմնախնդրի լուծման միջոցառումները նպատակաուղղված են`

- անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, վերակառուցմանն ու ընդլայնմանը.
- լճի ջրակենսաբանական պայմանների բարելավմանը, ջրի ձկնապաշարների վերականգնմանն ու վերարտադրմանը, այդ թվում` աբորիգեն հազվագյուտ և անհետացող տեսակների.
- կենսապաշարների հաշվառմանը, կադաստրավորմանն ու մոնիթորինգին.
- բուսական պաշարների օգտագործման կայուն մեխանիզմների ներդրմանը:

**Ռեկրեացիոն (հանգիստ և տուրիզմ) տնտեսաճյուղի արդյունավետ զարգացումը**

Սևանա լիճը և դրա ջրհավաք ավազանը համարվում են Հայաստանի բնակչության հանգստի կարևորագույն բազաներից մեկը: Այն ունի նաև միջազգային տուրիզմի զարգացման մեծ հեռանկարներ: Խորհրդային տարիներին մշակվել էր ռեկրեացիայի զարգացման համալիր ծրագիր, և սկսել էին ռեկրեացիոն կառուցապատման լայն աշխատանքներ: Սակայն 90-ական թվականներից հետո տնտեսական վերափոխումների արդյունքում սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի և կառավարման անկատար համակարգի հետևանքով գրեթե ամբողջապես կազմալուծվեց այդ ծրագրի իրականացումը, դրա փոխարեն սկսվեց Սևանա լճի առափնյա գոտու տարերային ու չհամակարգված ռեկրեացիոն յուրացումը, որտեղ չեն պահպանվում լճի և դրա առափնյա գոտու էկոհամակարգերի աղտոտվածությունը բացառող նորմերը, որը խիստ բացասական է անդրադառնում դրա բնականոն զարգացմանը:

Ռեկրեացիայի կայուն զարգացման և Սևանա լճի վրա դրա բացասական ազդեցությունները մեղմելու միջոցառումները նպատակաուղղված են`

- տարածքի ռեկրեացիոն համալիր ծրագրավորմանը և ռեկրեացիոն քաղաքաշինական հատակագծման ապահովմանը.
- էկոհամակարգերի ռեկրեացիոն ազդեցությունների թույլատրելի նորմերի և տարողունակությունների սահմանմանը.
- ռեկրեացիոն ենթակառուցվածքի, այդ թվում` բնապահպանական ուղղվածության զարգացմանը:

**Կառավարման համակարգի բարելավումը, այդ թվում՝ նորմատիվ հենքի կատարելագործումը**

Տարեկան և համալիր ծրագրերի իրականացման կարևոր բաղադրիչներից են Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանման, դրանց վրա տնտեսավարման ցանկացած ճյուղի կայուն կառավարման համակարգի ստեղծումը: Այդ նպատակի իրականացման համար նախատեսվող միջոցառումները նպատակաուղղված են Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կառավարման միասնական համակարգի ստեղծմանը, ինչպես նաև պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցմանն ու ներդաշնակմանը վերոնշյալ գործառնություններում:

Վերոնշյալ հիմնախնդիրների կարևորագույն երաշխիքը այլ ոլորտների գործառնությունների ծրագրավորման և իրականացմանն անհրաժեշտ նորմատիվային և նորմատիվային ստանդարտների հենքի առկայությունն է: Հաշվի առնելով այդ՝ տարեկան ծրագրում ներառված է նորմատիվային հենքի բարելավմանն անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

**5. ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**5.1. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման ոլորտում՝**

- Որոտան-Արփա հիդրոհանգույցի շահագործման շնորհիվ Սևանա լիճ տարեկան լրացուցիչ կտեղափոխվի մինչև 165 մլն մ<sup>3</sup> ջուր, որը լճի ջրային հաշվեկշռի մյուս փոփոխականների կայունության պահպանման դեպքում տարեկան կապահովի լճի մակարդակի 12.7 սմ-ով բարձրացում:

- Արփա - Սևան ջրատարի կայուն աշխատանքի ապահովման շնորհիվ Սևանա լիճ կտեղափոխվի մինչև 300 մլն մ<sup>3</sup> ջուր, այսինքն՝ իրական նախադրյալ կստեղծվի տարեկան լճի մակարդակը 23 սմ-ով բարձրացնելու համար:

Այսպիսով, վերոնշյալ գործողությունների արդյունքում, ընդունելով լճի ջրի հաշվեկշռի և էկոլոգիական այլ փոփոխականների հարաբերական կայունության նախապայմանը, Սևանա լճում կամբարվի շուրջ 465 մլն մ<sup>3</sup> ջուր, որը հավասարագոր է լճի մակարդակի տարեկան 35,8 սմ-ով բարձրացմանը: Հիմք ընդունելով Սևանա լճի տարեկան ջրառը՝ մոտ 170 մլն մ<sup>3</sup>, այն է՝ 14,2 սմ խորությամբ ջրային շերտ, ապա ստացվում է, որ վերոնշյալ միջոցառումները կապահովեն Սևանա լճի մակարդակի տարեկան բարձրացում՝ մոտ 21,6 սմ: Համաձայն այս հաշվարկների ստացվում է, որը համալիր ծրագրով նախատեսված 30 տարվա ընթացքում Սևանի ջրի ծավալը կավելանա շուրջ 8,8 մլրդ մ<sup>3</sup>, որը հավասարագոր է լճի մակարդակի 6.5 մ բարձրացմանը: Էկոլոգիական հավասարակշռության տեսանկյունից լճի մակարդակի անհրաժեշտ 6 մ-ով բարձրացումից հետո Սևանա լճում կառաջանա ջրի հավելյալ պաշար, որը էներգետիկ ու տնտեսական այլ ճյուղերի համար շատ կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող բնական պաշար կհամարվի, և ազատորեն կարելի է օգտագործել այդ նպատակներով, այդ թվում՝ տարածաշրջանային պահանջների բավարարման համար:

Եղվարդի ջրամբարի շահագործման շնորհիվ Սևանա լճից կտնտեսվի 100 մլն մ<sup>3</sup> ջուր, որը կօգտագործվի գյուղատնտեսական կուլտուրաների ոռոգման նպատակով: Միաժամանակ կօգտագործվի Մարմարիկի ջրամբարի ներուժը Սևանա լճի ջրային պաշարների կայուն կառավարման տարաբնույթ խնդիրների լուծման նպատակով:

**5.2. Լճի մաքրության ապահովման ոլորտում**

Տարեկան և համալիր միջոցառումների իրականացման շնորհիվ աստիճանաբար կնվազի Սևանա լճի արտածին աղտոտվածությունը և կստեղծվեն բարենպաստ պայմաններ լճի ինքնամաքման և ջրի ջրաֆիզիկական, ջրաքիմիական, ջրակենսաբանական նախկին ցուցանիշերի վերականգնման համար: Ծրագրի իրականացման արդյունքում Սևանա լիճը կդառնա խմելու համար պիտանի ջրաղբյուր, և կապահովվի նրա օլիգոտրոֆ վիճակի երկարաժամկետ պահպանումը:

**5.3. Ջրօգտագործման արդյունավետ համակարգի ստեղծումը**

Սևանա լճի ջրհավաք ավազանում բնակավայրերի ջրամատակարարման ցանցի կատարելագործման, այդ թվում՝ ոռոգման ցանցի վերազինման, ինչպես նաև Սևանա լճից ջրառի և ջրալցմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքում կապահովվի ջրօգտագործման կառավարման միասնական և վերահսկելի համակարգ, որը իրավասու կլինի ինչպես Սևանա լիճ մուտք գործող ջրերի նորմավորված քանակական և որակական ցուցանիշերի ապահովման, այնպես էլ լճից ջրբացթողումների կարգավորման համար:

**5.4. Կենսաբազմազանությունը**

Համալիր ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում կհաստատվեն ավազանի կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման արդյունավետ մեխանիզմներ, որոնք կապահովեն էկոհամակարգի ու դրա բաղադրիչների բնականոն զարգացումը:

5.5. Ռեկրեացիոն ինդուստրիան

Տարեկան և համալիր ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվում է Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ստեղծել բարձր ռեկրեացիոն ինդուստրիայի զարգացած միասնական համակարգ, որը կդառնա այս տարածաշրջանի բարձր եկամտաբեր, աշխատատար և էկոլոգիապես համեմատաբար անվնաս հեռանկարային տնտեսաճյուղ: Այն կզարգանա ռեկրեացիոն ինդուստրիայի համալիր ծրագրի և ռեկրեացիոն տարածագործառնական հասակագծման և դրա հիման վրա համալիր կառույցների ստեղծման ճանապարհով:

6. ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

6.1. Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակ սահմանել մինչև 170 մլն մ<sup>3</sup>:

Տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում կառավարությունը «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:

6.2. Սևանա լճի ջրհավաք ավազանի կենսապաշարների, այդ թվում՝ ձկան պաշարների չափաքանակները սահմանվում են՝ ելնելով դրանց հաշվառման, ուսումնասիրման արդյունքներից և գիտահետազոտական կազմակերպությունների կողմից տրված հիմնավորումներից ու առաջարկություններից՝ քվտավորման սկզբունքով:

6.3. 2008 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 360 մլն մ<sup>3</sup>:

*(6.3-րդ կետը լրաց. 10.06.08 ՀՕ-115-Ն, փոփ. 21.08.08 ՀՕ-136-Ն)*

6.4. 2012 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 320 մլն մ<sup>3</sup>:

*(6.4-րդ կետը լրաց. 22.06.12 ՀՕ-171-Ն)*

6.5) 2014 թվականին Սևառու գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրությամբ, ինչպես նաև ընթացիկ տարվա առանձնահատկություններով պայմանավորված՝ Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 270 մլն մ<sup>3</sup>:

*(6.5-րդ կետը լրաց. 21.06.14 ՀՕ-81-Ն)*

6.6. 2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 270 մլն մ<sup>3</sup>: 2017 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի 170 մլն մ<sup>3</sup>-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների հասույթի և կատարած ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը (այսուհետ՝ Լրացուցիչ շահույթ) ենթակա է վճարման այդ գումարների հավաքման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանված ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ): Լրացուցիչ շահույթի հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաև հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվ (նախահաշիվներով) նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:

*(6.6-րդ կետը լրաց. 06.07.17 ՀՕ-116-Ն)*

6.7) 2018 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել մինչև 210 մլն մ<sup>3</sup>: 2018 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի 170 մլն մ<sup>3</sup>-ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարները (այսուհետ՝ Լրացուցիչ գումարներ) ենթակա են վճարման այդ գումարների հավաքման և դրանց հաշվին ժամանակավոր ծրագրի 3-րդ մասով սահմանված ուղղություններով նպատակային ներդրումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան բացված արտաբյուջետային հաշվին (այսուհետ՝ Արտաբյուջետային հաշիվ): Լրացուցիչ գումարների հաշվարկման ու վճարման կարգը, ինչպես նաև դրանց հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվը (նախահաշիվները) սահմանում է Կառավարությունը: Արտաբյուջետային հաշվի միջոցների շրջանառությունը և պետական բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլումն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեկան արդյունքներով Արտաբյուջետային հաշվի միջոցների չծախսված մնացորդն ուղղվում է այդ հաշվից

հաջորդ տարում կատարվելիք բյուջետային ելքերի նախահաշիվներով (նախահաշիվներով) նախատեսվող բյուջետային ելքերի ֆինանսավորմանը:

(6.7-րդ կետը լրաց. 29.08.18 ՀՕ-373-Ն)

**7. ԾՐԱԳՐԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն ծրագիրը բխում է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի հոդվածներից (3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-15-րդ): ՀՀ բնապահպանության նախարարությունը, որպես բնապահպանության ոլորտի պետական լիազորված մարմին, հանդիսանում է այս ծրագրի կատարման պատասխանատուն: Ծրագրի իրականացման մոնիթորինգը կատարում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

Ծրագրի անկախ և մասնագիտական փորձաքննությունն իրականացնում է Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված են շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչները:

Համալիր և տարեկան ծրագրերի իրականացման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ Ազգային ժողովը:

Համալիր և տարեկան ծրագրերով նախատեսված ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ բյուջետային ծախսերի հսկողության և վերահսկողության համար սահմանված ընթացակարգերով:

**Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր**

***Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերի***

Ծրագրի մշակման հիմքը՝	«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը
Ծրագրի հիմնական մշակողները՝	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ ԳԱԱ
Ծրագրի մշակման համակարգողը՝	ՀՀ բնապահպանության նախարար
Ծրագրի նպատակը՝	Սևանա լճի, որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռի վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգի բնականոն ներդաշնակ զարգացման ու կայուն օգտագործման ապահովումը
Ծրագրի հիմնական կատարողները՝	ՀՀ նախարարություններն ու գերատեսչությունները, ՀՀ մարզպետարանները, տեղական ինքնակառավարման մարմինները
Ծրագրի իրականացման ուղիներն ու ֆինանսավորման աղբյուրները՝	Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման և օգտագործման հիմնախնդիրների համալիր լուծումները նախատեսվում են տարեկան և համալիր ծրագրերով, ՀՀ պետական բյուջեով և միջազգային դրամաշնորհներով ու վարկերով

Հավելված 1

**Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր**

**2002 թ. ՍԵԻ-անա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների**

h/h	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը (մլն դրամ)
1	2	3	4	5	6	7
<i><b>1. Նորմատիվ հենքի կատարելագործում</b></i>						
1.1	Սևանա լճի ակտիվ ջրատվության որոշում	Բնական և արհեստական պայմաններում Սևանա լճի ներհոսքի և արտահոսքի համադրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ, ՀՀ գյուղնախ. ջրային պրոբլեմների ինստիտուտ	2002 թ. 2-րդ եռամսյակ	-
1.2	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի բնական ռեսուրսների՝ հողի, ջրի, բուսական և կենդանական աշխարհի հաշվառման կարգի մշակում	Հաշվառման համար համապատասխան մեխանիզմների և մեթոդական ուղեցույցների մշակում և կատարելագործում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2002 թ. 4-րդ եռամսյակ	-
1.3	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման մոնիթորինգի կազմակերպման և վարման կարգի սահմանում	Էկոհամակարգի, դրա բաղադրիչների փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրում, գնահատում և կանխատեսման համար անհրաժեշտ դիտանցի կազմակերպում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2002 թ. 2-րդ եռամսյակ	-
1.4	Հստ գոտիների կենսապաշարների, այդ թվում՝ անտառային օգտագործման կարգի սահմանում	Բնական ռեսուրսների օգտագործման (ձկնորսության, խեցեղենի որսի, որսորդության, օգտակար նյութերի հավաքի, խոտհունձ, անտառներում փայտանյութի և կողմնարդյունքի մթերում) նորմավորում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ մարզպետներ, ՀՀ ԳԱԱ	2002 թ. 4-րդ եռամսյակ	-
1.5	Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում բնօգտագործման կարգի սահմանում	Ռեկրեացիոն և տնտեսական այլ ճյուղերում բնական ռեսուրսների օգտագործման կառավարելի համակարգի ստեղծում, տնտեսավարման սկզբունքների սահմանում և բնական ռեսուրսների օգտագործման կարգերի մշակում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2002 թ. 4-րդ եռամսյակ	-
<i><b>2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառնությունների կատարելագործման միջոցառումներ</b></i>						
2.1	Հիդրոտեխնիկական կառույցներ Որոտան գետի վրա	Որոտան-Արփա հիդրոհանգույցի 195մ ջրագծի կառուցման աշխատանքների ավարտում և օբյեկտի շահագործման հանձնում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	2002 թ. դեկտեմբեր	պետբյուջե՝ 1348, 309
2.2	Սևանա լճից 2002 թ. 170 մլն մ <sup>3</sup> ջրառի չափաքանակի առաջարկության հիմնավորում	Ռոտզման համակարգի բարելավման գործողությունների իրականացման և ջրօգտագործման ՕԳԳ բարձրացման ուղղությամբ միջոցառումների մշակում	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ էներգետիկայի նախարարություն ՀՀ ԳԱԱ	2002 թ. 1-2-րդ եռամսյակ	-
2.3	Սևանա լիճ ջրերի տեղափոխման ժամանակացույցի հիմնավորում	Տարբեր ջրատարերից Սևանա լիճ մուտք գործող ջրերի քանակության և ժամանակացույցի հիմնավորում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ ԳԱԱ	2002 թ. 1-ին եռամսյակ	-

2.4	Ջրային պաշարների հաշվառում, նոր ջրային հաշվեկշռի կազմում	<ul style="list-style-type: none"> <li>• Համալիր ուսումնասիրությունների կատարման միջոցով հաշվառել Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային պաշարները, ջրային հաշվեկշռի հաշվարկման նոր մեթոդիկայով ճշգրտել Սևանա լճի ջրային հաշվեկշիռը</li> <li>• Լճի ծավալի փոքրացման ջերմունակության ու կլիմայական տարրերի փոփոխության հետ կապված գոլորշիացման ցուցանիշների ճշգրտում</li> </ul>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ ԳԱԱ</p> <p>ՀՀ ԳԱԱ</p>	<p>2002 թ. և շարունակական</p> <p>2002 թ. 1-4-րդ եռամսյակ</p>	-
2.5	Ջրօգտագործման պլանների մշակում և հայտերի ներկայացում պետական լիազորված մարմնին	Ջրօգտագործման տարեկան ծրագրերի կազմում՝ ըստ կենցաղային, գյուղատնտեսական, էներգետիկ և արդյունաբերական պահանջարկի	ՀՀ գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի նախարարություններ, ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ,	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ. 1-ին եռամսյակ	-
2.6	Մարտունի, Վարդենիս և Գավառ քաղաքների կեղտաջրերի կոյուղու մաքրման կայանների կառուցման ու կոյուղու կոլեկտորների վերականգնման տեխնիկատնտեսական հիմնավորում	Մարտունի, Վարդենիսի և Գավառ քաղաքների կեղտաջրերի կոյուղու մաքրման կայանների կառուցման համար տեխնիկատնտեսական հիմնավորման նախագծերի մշակում	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ. և շարունակական	միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 15 մլն ԱՄՆ դոլար
2.7	Առավել ջրառատ գետերի հոսքերի կարգավորման ծրագրերի մշակում	Սևանա լիճ թափվող հիմնական գետերի հոսքերի կարգավորման համալիր ծրագրերի մշակում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղնախարարության նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ԳԱԱ	2002 թ. և 4-րդ եռամսյակ	-
2.8	Սևանա լճի ջրհավաք ավազանում անտառների վերականգնում և անտառային սեկտորի զարգացում	12500 հա տարածքում անտառվերականգնման աշխատանքներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ մարզպետներ, ՀՀ ԳԱԱ	2002 թ. և շարունակական	միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 3,5 մլն ԱՄՆ դոլար
2.9	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում	ՀՀ արդյունաբերության և առևտրի, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, քաղաքաշինության, էներգետիկայի և բնապահպանության նախարարություններ	ՀՀ մարզպետներ	2002 թ. 2-րդ եռամսյակ	-
2.10	Տարածաշրջանի հողերի կադաստրային արժեքների վերանայում	Բնօգտագործման մասով հողի կադաստրային արժեքների ճշգրտում և վերագնահատում	ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ ֆինանսների և կոնոմիկայի նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ.	-

2.11	Խախտված ջրային էկոհամակարգերի վերականգնում	Գիլլի լճի վերականգնում	ՀՀ բնապահպանության նախարարություն	Մարզպետարան	2002 թ. և շարունակական	միջազգային ֆինանսավորում, Գոթբալ էկոլ. հիմնադրամ 1մլն ԱՄՆ դ.
2.12	Սևանա լճի էկոհամակարգերի բնապահպանական մարմինների . նյութատեխնիկական բազայի հզորացում	<ul style="list-style-type: none"> <li>• հանրապետական բնապահպանական պետական տեսչություն և տարածքային տեսչություններ</li> <li>• «Սևան» ԱՊ պահպանության ծառայություն</li> <li>• Վայոց ձորի և Սյունիքի մարզերի անտառտնտեսություններ</li> </ul>	ՀՀ բնապահպանության նախարարություն, Մարզպետներ	ՀՀ պետական գնումների կոմիտե	2002 թ. և շարունակական	միջազգային ֆինանսավորում Համաշ. բանկ 1,0 մլն ԱՄՆ դոլար
2.13	Ձկան պաշարների համալրում	Արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ պետական գնումների գործակալություն	2002 թ. 2-4-րդ եռամսյակ	պետբյուջե՝ 9,975
2.14	Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում	էկոհամակարգերի վերականգնման և կայուն օգտագործման գիտական հիմունքների մշակում	ՀՀ ԳԱԱ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ. և շարունակական	-
2.15	«Սևան» ազգային պարկի պահպանություն	Ազգային պարկի պահպանության իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն		2002 թ.	պետբյուջե՝ 73,131

\*) Միջազգային ֆինանսավորման ծավալները կնշվեն դրամաշնորհների աղբյուրների ճշգրտումից հետո:

Հավելված 2

**Հ Ա Մ Ա Լ Ի Ր Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՍԵՒանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների**

h/h	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը (մլն դրամ)
1	2	3	4	5	6	7
<i>1. Նորմատիվ հենքի կատարելագործում</i>						
1.1	Սևանա լճի ակտիվ ջրատվության որոշում	Բնական և արհեստական պայմաններում Սևանա լճի ներհոսքի և արտահոսքի համադրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ ՀՀ գյուղնախ. ջրային պրոբլեմների ինստիտուտ	2002 թ.	-
1.2	Լճի ջրհավաք ավազանի գետերի ինքնամաքրման ունակությունների և բնապահպանական նվազագույն հոսքի նորմերի սահմանում	Սևանա լճի ջրհավաք ավազանի, գետերի էկոլոգիական վիճակի ուսումնասիրություն, գնահատում և նորմերի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2003-2004 թթ.	պետբյուջե՝ 4,5

1.3	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի բնական ռեսուրսների՝ ջրի, բուսական և կենդանական աշխարհի հաշվառման կարգի մշակում	Հաշվառման համար համապատասխան համակարգերի ստեղծում, կատարելագործում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2002 թ.	-
1.4	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման մոնիթորինգի կազմակերպման և վարման կարգի սահմանում	Էկոհամակարգի, դրա բաղադրիչների փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրում, գնահատում և կանխատեսման համար անհրաժեշտ դիտանցի կազմակերպում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2003-2004 թթ.	պետբյուջե՝ 5,5
1.5	Սևանա լճի և դրա ջրային էկոհամակարգերի համար վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների սահմանում	Համապատասխան հետազոտությունների կատարում և գնահատում	ՀՀ բնապահպանության նախարարություն	Առողջապահության նախարարություն ՀՀ ԳԱԱ	2003 թ.	պետբյուջե՝ 1,5
1.6	Ըստ գոտիների կենսապաշարների (այդ թվում՝ անտառային) օգտագործման կարգի սահմանում	Բնական ռեսուրսների օգտագործման (ձկնորսության, խեցգետնի որսի, որսորդության, օգտակար նյութերի հավաքի, խոտհնձի, անտառներում փայտանյութի և կողմնարդյունքի մթերման) նորմավորում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ մարզպետներ ՀՀ ԳԱԱ	2002 թ.	-
1.7	Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում բնօգտագործման կարգի սահմանում	Ռեկրեացիոն և տնտեսական այլ ճյուղերում բնական ռեսուրսների օգտագործման կառավարելի համակարգի ստեղծում, տնտեսավարման սկզբունքների սահմանում և բնական ռեսուրսների օգտագործման կարգերի մշակում	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ԳԱԱ	2002 թ.	-
1.8	Արդյունաբերական և կենցաղային թափոնների տեղադրման թույլատրելի չափաքանակների սահմանում	«Թափոնների մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ կապված	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն և ՀՀ մարզպետարաններ	2003 թ. և շարունակական	-

**2. Կարավարման համակարգի կատարելագործում**

2.1	«Սևան» ազգային պարկի կառավարման համակարգի կատարելագործում	«Սևան» ազգային պարկում գիտական բաժնի ուժեղացում և Սևանա լճի ջրհավաք ավազանի հիդրոկենսաբանական մոնիթորինգի համակարգի (այդ թվում՝ մշտական դիտակետերի) ստեղծում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2003 թ. և շարունակական	Միջազգային ֆինանսավորում, Համաշ. բանկ 1,4 մլն ԱՄՆ դոլար
2.2	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տեղեկատվական ցանցի մոնիթորինգի համակարգի ստեղծում	«Սևան» ազգային պարկի տարածքային ԲՀՊՏ և մարզպետարաններում տեղեկատվության ընդունման և հաղորդման ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում, նյութատեխնիկական և կադրային ներուժի ուժեղացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2003-2004 թթ. և շարունակական	պետբյուջե՝ 4,5 Միջազգային ֆինանսավորում, Համաշ. բանկ 0,4 մլն ԱՄՆ դոլար

**3. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառնությունների կատարելագործման միջոցառումներ**



3.1	Հիդրոտեխնիկական կառույցներ Որոտան գետի վրա	Որոտան-Արփա հիդրոհանգույցի 195մ ջրագծի կառուցման աշխատանքների ավարտում և օբյեկտի շահագործման հանձնում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	2002 թ.	պետբյուջե՝ 1348,309
3.2	Արփա-Սևան թունելի N 3 և N 4 հորանների վերանորոգում և 154մ ջրատարի վթարային հատվածի վերականգնում	Արփա-Սևան ջրատարի կայուն օգտագործումը ապահովող անհրաժեշտ միջոցառումների իրականացում	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ ֆինանսների նախարարություն	2003-2004 թթ. և շարունակական	պետբյուջե՝ 1200
3.3	Եղվարդի և Մարմարիկի ջրամբարների շինարարության շարունակման տեխնիկատնտեսական հիմնավորում	Եղվարդի և Մարմարիկի ջրամբարների կառուցման համար անհրաժեշտ ծրագրերի մշակում և հաստատում	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ ֆինանսների նախարարություն	2003 թ.	միջ. ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 53 մլն դրամ
3.4	Սևանա լճից 2002թ. 170մլն մ <sup>3</sup> ջրառի չափաքանակի առաջարկության հիմնավորում	Ռոտզման համակարգի բարելավման գործողությունների իրականացման և ջրօգտագործման ՕԳԳ բարձրացման ուղղությամբ միջոցառումների մշակում	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ էներգետիկայի նախարարություն	2002 թ.	-
3.5	Սևանա լիճ ջրերի տեղափոխման ժամանակացույցի հիմնավորում	Տարբեր ջրատարերից Սևանա լիճ մուտք գործող ջրերի քանակության և ժամանակացույցի հիմնավորում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ ԳԱԱ	2002 թ.	-
3.6	Ռոտզման համակարգի կատարելագործում և ջրային նոր օբյեկտների ստեղծում	<ul style="list-style-type: none"> <li>• Որոտան-Արփա թունելի գլխամասային ջրընդունիչ կառուցվածքի ստորջրյա կառույցի վերականգնում</li> <li>• Արփա-Սևան թունելի ելքամասից ռոտզման համակարգի կառուցման նախագծի մշակում</li> <li>• Եղվարդի ջրամբարի կառուցում</li> </ul>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p> <p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p> <p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե</p>	<p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե</p> <p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2003-2004 թթ. և շարունակական</p> <p>2003 թ.</p> <p>2003 թ. և շարունակական</p>	<p>պետբյուջե՝ 5500 միջ. ֆինանսավորում*</p> <p>Համաշ. բանկ միջազգային ֆինանսավորում* Համաշ. բանկ</p> <p>միջ. ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 70 մլն ԱՄՆ դոլար</p>
3.7	Սևանա լճի ջրհավաք ավազանում առաջացած կեղտաջրերի մաքրում	<ul style="list-style-type: none"> <li>• Մարտունի, Վարդենիս և Գավառ քաղաքների կեղտաջրերի կոյուղու մաքրման կայանների կառուցման ու կոյուղու կոլեկտորների վերականգնման տեխնիկատնտեսական հիմնավորում</li> <li>• Մարտունի, Վարդենիս և Գավառ քաղաքների կեղտաջրերի կոյուղու մաքրման կայանների կառուցման ու կոյուղու կոլեկտորների վերականգնման շինարարության աշխատանքների իրականացում</li> </ul>	<p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ</p> <p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ</p>	ՀՀ բնապահպանության նախարարություն	<p>2002 թ.</p> <p>2003 թ. և շարունակական</p>	<p>միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 15 մլն ԱՄՆ դոլար</p>

		<ul style="list-style-type: none"> <li>Արևիկ-Սևան կոյուղու համակարգի վերականգնում</li> <li>Կառուցել գյուղական համայնքների կեղտաջրերի հավաքման, ինչպես նաև քիչ էներգատար և հեշտ շահագործելի կենսաբանաինժեներական մաքրման կայաններ</li> <li>Ջերմուկ քաղաքի համար նոր՝ Կեչուտի ջրամբարը շրջանցող կեղտաջրերի հեռացման կոլեկտորի կառուցում</li> </ul>	<p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ</p> <p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ</p> <p>ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե, Մարզպետներ</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2003 թ. և շարունակական</p> <p>2003 թ. և շարունակելի</p> <p>2004 թ. և շարունակական</p>	<p>միջազգային ֆինանսավորում Համաշ. բանկ 1 մլն ԱՄՆ դոլար միջ.</p> <p>ֆինանսավորում Համաշ. բանկ 1,5 մլն ԱՄՆ դոլար</p> <p>միջ. ֆինանսավորում Համաշ. բանկ 0.6 մլն ԱՄՆ դոլար</p>
3.8	Ջրային պաշարների հաշվառում, նոր ջրային հաշվեկշռի կազմում	<ul style="list-style-type: none"> <li>Համալիր ուսումնասիրությունների կատարման միջոցով հաշվառել Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային պաշարները, ջրային հաշվեկշռի հաշվարկման նոր մեթոդիկայով ճշգրտել Սևանա լճի ջրային հաշվեկշիռը</li> <li>Լճի ծավալի փոքրացման ջերմունակության ու կլիմայական տարրերի փոփոխության հետ կապված գոլորշիացման ցուցանիշների ճշգրտում</li> </ul>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ ԳԱԱ</p> <p>ՀՀ ԳԱԱ</p>	<p>2002-2003 թթ. և շարունակական</p> <p>2002-2003 թթ. և շարունակական</p>	<p>պետբյուջե՝ 4.0</p> <p>պետբյուջե՝ 3.5</p>
3.9	Ջրօգտագործման պլանների մշակում և հայտերի ներկայացում պետական լիազորված մարմնին	Ջրօգտագործման տարեկան ծրագրերի կազմում՝ ըստ կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական պահանջարկի	ՀՀ գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի նախարարություններ, ջրային տնտեսության պետական կոմիտե, մարզպետներ,	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ. և շարունակական	-
3.10	Հողհանդակների հաշվառում, գույքագրում	Տարբեր նշանակության (գյուղատնտեսական, բնապահպանական և այլն) հողատեսքերի քարտեզագրում և գույքագրում	ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ բնապահպանության և քաղաքաշինության նախարարություններ, մարզպետներ	2003 թ. և շարունակական	պետբյուջե՝ 3.0
3.11	Տարածաշրջանի հողերի կադաստրային արժեքների վերանայում	Բնօգտագործման մասով հողի կադաստրային արժեքների ճշգրտում և վերագնահատում	ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ.	-
3.12	Սևանա լճի ջրհավաք ավազանի խախտված հողատեսքերի վերականգնում	Էրոզացված և խախտված հողերի վերականգնում	Տարածաշրջանի հողօգտագործողներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2003-2004 թթ. և շարունակական	միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 2.0 մլն ԱՄՆ դոլար

3.13	Էկոլոգիական գոտիների սահմանների ճշգրտում և հողերի օգտագործման սխեմաների կազմում	<ul style="list-style-type: none"> <li>• Էկոլոգիական գոտիների ճշգրտում</li> <li>• հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում</li> </ul>	<p>ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ քաղաքաշինության նախարարություններ, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ պատմամշակ. հուշարձանների պահպ. վարչություն</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2003 թ. և շարունակական</p>	<p>պետբյուջե՝ 3.0</p> <p>պետբյուջե՝ 2.0</p>
3.14	Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոլոգիական գոտիների բնական լանդշաֆտների տարածադրձառնական գոտիավորում՝ տարածքային հատակագծման ուղղվածի նախապատրաստում	<ul style="list-style-type: none"> <li>• Սևանա լճի ավազանի տարածքային հատակագծման նախագծի մշակում,</li> <li>• Բնառեսուրսների պոտենցիալի գնահատում և բնօգտագործման նախընտրելի ձևերի ու թույլատրելի ծանրաբեռնվածության նորմերի սահմանում,</li> <li>• Սևանա լճի գոտիավորման նախագծի մշակում</li> </ul>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն, մարզպետներ</p>	<p>ՀՀ ԳԱԱ, ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2003-2005 թթ. 2003-2005 թթ. 2003-2005 թթ.</p>	<p>պետբյուջե՝ 3,5</p>
3.15	Սևանա լճի ջրհավաք ավազանում վայրի բուսական և կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում	<ul style="list-style-type: none"> <li>• Կենդանաբանական և բուսական բնական ռեսուրսների, այդ թվում՝ անտառային</li> <li>• «Սևան» ԱՊ կառուցվածքում մոնիթորինգ իրականացնող ստորաբաժանման ստեղծում</li> <li>• հաշվառման իրականացում</li> </ul>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ ԳԱԱ, մարզպետներ</p>	<p>2003 թ. և շարունակական</p>	<p>պետբյուջե՝ 2.5</p>
3.16	Սևանա լճի ջրհավաք ավազանում անտառների վերականգնում և անտառային սեկտորի զարգացում	<p>12500 հա տարածքում անտառվերականգնման և անտառխնամքի աշխատանքներ</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>Մարզպետներ, ՀՀ ԳԱԱ</p>	<p>2002 թ. և շարունակական</p>	<p>միջ. ֆինանսավորում Համաշ. բանկ 3.5 մլն ԱՄՆ դոլար</p>
3.17	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	<p>Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում</p>	<p>ՀՀ արդյունաբերության և առևտրի, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, քաղաքաշինության, էներգետիկայի և բնապահպանության նախարարություններ</p>	<p>ՀՀ մարզպետարաններ</p>	<p>2003 թ. և շարունակական</p>	<p>պետբյուջե՝ 1.0</p>
3.18	Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական մարմինների նյութատեխնիկական բազայի հզորացում	<ul style="list-style-type: none"> <li>• Հանրապետական բնապահպանական պետական տեսչություն և տարածքային տեսչություններ</li> <li>• «Սևան» ԱՊ պահպանության ծառայություն</li> <li>• Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզպետարաններ, «Սևան» ԱՊ և անտառտնտեսություններ</li> </ul>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն, մարզպետներ</p>	<p>ՀՀ պետական գնումների կոմիտե</p>	<p>2002-2003 թթ. և շարունակական</p>	<p>միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 1,0 մլն ԱՄՆ դոլար</p>
3.19	Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում	<p>Գործող աղբավայրերի բարեկարգում և անհրաժեշտության դեպքում նորերի ստեղծում</p>	<p>Մարզպետներ</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2003 թ. և շարունակական</p>	<p>միջազգային ֆինանսավորում՝ Համաշ. բանկ 0.5 մլն ԱՄՆ դոլար</p>

3.20	Խախտված ջրային էկոհամակարգի վերականգնում	Գիրլի լճի վերականգնում	ՀՀ բնապահպանության նախարարություն	Մարզպետարան, համայնքներ	2002-2004 թթ.	միջ. ֆինանսավորում Գրքալ էկոլ. հիմնադրամ 1 մլն ԱՄՆ դոլ.
3.21	Ձկան պաշարների համալրում	Արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ պետական գնումների գործակալություն	2002 թ. և շարունակական	պետություն՝ 2002 թ. համար 9,975
3.22	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման գիտահետազոտական աշխատանքների համապարփակ ծրագրերի մշակում	Էկոհամակարգի վերականգնման և կայուն օգտագործման գիտական հիմունքների մշակում	ՀՀ ԳԱԱ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2002 թ. և շարունակական	-
3.23	«Սևան» ազգային պարկի պահպանություն	Ազգային պարկի պահպանության իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն		2002 թ.	պետություն՝ 73,131
3.24	Լճի շրջակայքի շուրջ 5000հա անտառաշերտերի մաքրում, կոճղերի հեռացում և նոր անտառաշերտերի հիմնում	<ul style="list-style-type: none"> <li>• Լճի մակարդակը 6 մ բարձրացնելու հետ կապված հին անտառաբների և կոճղերի մաքրում</li> <li>• Անտառաշերտերի հիմնում և խնամք</li> </ul>	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ ԳԱԱ	2007-2030 թթ.	միջ. ֆինանսավորում Համաշ. բանկ 35 մլն ԱՄՆ դոլար  միջ. ֆինանսավորում Համաշ. բանկ 25 մլն դոլար
3.25	Այլընտրանքային ջրային ռեսուրսների օգտագործումը նոր ջրամբարների կառուցմամբ	<ul style="list-style-type: none"> <li>• Զիրակի ջրամբարի կառուցում - 25 մլն խոր.մ</li> <li>• Գետիկվանքի ջրամբարի կառուցում - 23 մլն խոր.մ</li> <li>• Ջրամբար Վեդի գետի վրա - 38 մլն խոր.մ</li> </ul>	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	2007-2030 թթ.	միջ. ֆինանս. Համաշ. բանկ 40մլն ԱՄՆ դ. միջ. ֆինանս. Համաշ. բանկ 50մլն ԱՄՆ դ. միջ. ֆինանս. Համաշ. բանկ 40 մլն ԱՄՆ դ.

\*) Ֆինանսավորման ծավալները ենթակա են ճշգրտման՝ համաձայն ամեն տարվա համար նախատեսվող բյուջեի:

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Վ Ո Ր Ծ Ր Ա Գ Ի Ր**

**2008 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Ներածություն**

2008 թվականին Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է՝ համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-րդ կետի 2-րդ մասի դրույթների:

Ծրագրում ներառված են տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում պետական քաղաքականության իրականացման հիմնական առաջնային ուղղությունները և անհրաժեշտ միջոցառումները:

Ծրագիրը նպատակաուղղված է 2008 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ-իդրոէլեկտրակայանի համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ

ջրաքանակ ապահովելու, ինչպես նաև ռոռզման ջրի արդյունավետ մատակարարման ապահովման հիմք ստեղծելուն: Ծրագիրը մշակված է՝ ելնելով հանրապետությունում ստեղծված եղանակային և բնակլիմայական պայմաններից:

**2. Ներկա վիճակի վերլուծություն**

Ռոռզման սեզոնը 2008 թվականին սկսվեց ապրիլ ամսին, ինչը վերջին տարիների համար աննախադեպ երևույթ էր: Տեղումների երկարատև անբավարարության կամ իսպառ բացակայության, օդի բարձր ջերմաստիճանի և հարաբերական ցածր խոնավության պայմաններում ապրիլ ամսից սկսած՝ հանրապետությունում առկա էին երաշտին բնորոշ բոլոր երևույթները:

Կայուն ջրամատակարարումը հնարավոր եղավ իրականացնել հետևողական և համակարգված գործողությունների շնորհիվ, այդ թվում՝ ա.թ. ապրիլի 22-ից մինչև մայիսի 1-ը Սևանա լճից վերցված շուրջ 9.7 մլն մ<sup>3</sup> ջրաքանակի (առ 14.05.2008 թ. Սևանա լճից վերցվել է 33.1 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ), որոշ դոտացիոն ջրամբարներից (մասնավորապես, Ագատի և Ապարանի) ջրի ժամանակից շուտ բացթողումների, ինչպես նաև խորքային հորերի և պոմպակայանների աշխատեցման հաշվին, որոնք և դարձան ջրաքանակի դեֆիցիտի ծածկման հիմնական աղբյուրները:

2001-2007 թթ. ընթացքում Սևանա լճից Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա ռոռզման նպատակով ջրաքանակ հիմնականում բաց է թողնվել հունիսի առաջին տասնօրյակից սկսած:

Նմանատիպ աննախադեպ պատկեր է նաև ռոռզման սեզոնում ռազմավարական և դոտացիոն նշանակություն ունեցող Ապարանի և Ագատի ջրամբարներում: Մասնավորապես, 14.05.2008 թ. դրությամբ Ապարանի ջրամբարի լցվածությունը կազմել է 27.93 մլն մ<sup>3</sup>, որը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 57.2 մլն մ<sup>3</sup>-ով, իսկ Ագատի ջրամբարի լցվածությունը 14.05.2008 թ. դրությամբ կազմել է 45.96 մլն մ<sup>3</sup>, որը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 25.06 մլն մ<sup>3</sup>-ով:

**3. Ծրագրի հիմնական նպատակը և առաջնային խնդիրները**

Ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ռոռզման համակարգերի իշխման տակ գտնվող ռոռզելի հողատարածքների ռոռզումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը, ինչպես նաև ամբողջական ջրամատակարարման համար համապատասխան պայմանների ստեղծումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրներն են՝

- 2008 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության իրականացումը՝ առավելագույնը սահմանելով մինչև 360 մլն մ<sup>3</sup>.
  - որոշ ջրանցքների համար դոտացիոն ջրամբարներում կուտակված (Ապարանի և Ագատի ջրամբարներ) ջրի արդյունավետ օգտագործումը.
  - Սևանա լճից բաց թողնված ջրի արդյունավետ օգտագործումը.
  - հաշվետվության և վերահսկողության ապահովումը.
  - օրենսդրական դաշտի ապահովումը:
- (3-րդ կետը փոփ. 21.08.08 ՀՕ-136-Ն)**

**4. Ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումները**

Նկատի ունենալով փաստացի առկա վիճակը և եղանակային կանխատեսումները՝ ձեռնարկվել են համապատասխան աշխատանքներ՝ համակարգի բարձր պատրաստվածության ապահովման, խորքային պոմպերը և պոմպակայանները լրիվ դրվածքային արտադրողականությամբ պատրաստ վիճակում պահելու, ջրի կորուստների նվազեցման համար պահանջվող աշխատանքների իրականացման, ջրի վերցման և ջրի տրման կետերում հաշվառման մեխանիզմների կատարելագործման, ջրամբարներում ջրի կուտակման լրացուցիչ աշխատանքների իրականացման, ջրանցքներում ջրի բաշխման շուրջօրյա աշխատանքների կազմակերպման և այլ ուղղություններով:

Վերը նշված աշխատանքների իրականացմանը զուգընթաց կպահանջվի Սևանա լճից լրացուցիչ ջրառ: Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ռոռզման համակարգերի իշխման տակ գտնվող ռոռզելի հողատարածքների (համաձայն ջրօգտագործողների ընկերությունների տված վերջնական հայտերի) մակերեսը կազմում է շուրջ 42.7 հազ. հա, որոնց ռոռզման ջրի պահանջարկը համակարգերի գլխամասերում և Հրազդան գետի հունի վրացման նպատակով Աղբյուրակի ջրամբարից մինչև Երևանյան լիճը գետի հունով բաց թողնվող ջրի ծավալը կկազմեն շուրջ 511.8 մլն մ<sup>3</sup>: Նշված ծավալի ջրի կանխատեսումային պահանջարկը նախատեսվում է ապահովել Հրազդան գետով, Ագատի և Ապարանի ջրամբարներով, Մխչյանի և Ռանչպար-Արևշատի պոմպակայանների համակարգերով, ինչպես նաև Սևանա լճից բաց թողնվող ջրաքանակով՝ պահանջարկի և նշված ջրային համակարգերից հնարավոր ջրառի տարբերությունը (հաշվի առած նաև՝ Սևան-Հրազդան համակարգի դերիվացիայի ջրանցքներում ֆիլտրացիոն կորուստները՝ 7 %-ի չափով) փոխհատուցելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածները, ինչպես նաև կանխատեսվող եղանակային պայմանները՝ 2008 թվականին

գյուղատնտեսական մշակաբույսերի ռոռոգումն ապահովելու նպատակով Սևանա լճից բաց թողնվող առավելագույն ջրաքանակը կկազմի 360 մլն մ<sup>3</sup>:

*(4-րդ կետը փոփ. 21.08.08 ՀՕ-136-Ն)*

**5. Ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ հսկողությունը**

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-րդ կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բացթողումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած երկշաբաթյա կանխատեսումային առաջարկությունների հիման վրա:

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր տասնօրյակը մեկ Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-րդ կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որի արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին:

*(հավելվածը լրաց. 10.06.08 ՀՕ-115-Ն)*

Հավելված 3<sup>1</sup>

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ**

**2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Ներածություն**

2012 թվականին Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետի 2-րդ պարբերության դրույթների:

Ծրագրում ներառված են տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում պետական քաղաքականության իրականացման հիմնական առաջնային ուղղությունները և անհրաժեշտ միջոցառումները:

Ծրագիրը նպատակաուղղված է 2012 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ-իրիզացիոն համակարգից սնվող ռոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների ռոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակ ապահովելու, ինչպես նաև ռոռոգման ջրի արդյունավետ մատակարարման ապահովման հիմք ստեղծելուն:

Ծրագիրը մշակված է՝ ելնելով հանրապետությունում ստեղծված եղանակային և բնակլիմայական պայմաններից:

**2. Ներկա վիճակի վերլուծությունը**

Ոռոգման սեզոնը 2012 թվականին սկսվեց ապրիլ ամսին, որը վերջին երեք տարիների համար աննախադեպ երևույթ էր, և պատկերը որոշակի առանձնահատկություններով նման է 2008 թվականին ստեղծված իրավիճակին: Տեղումների երկարատև անբավարարության կամ իսպառ բացակայության, օդի բարձր ջերմաստիճանի և հարաբերական ցածր խոնավության պայմաններում ապրիլ ամսից սկսած՝ հանրապետությունում առկա էին սակավաջրության հետ կապված երևույթները:

Կայուն ջրամատակարարումը հնարավոր եղավ իրականացնել հետևողական և համակարգված գործողությունների շնորհիվ, այդ թվում՝ ա.թ. մայիսի 2-ից մինչև հունիսի 14-ը Սևանա լճից վերցվել է 76.87 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ, որոշ դոտացիոն ջրամբարներից (մասնավորապես Ագատի և Ապարանի) ջրի ժամանակից շուտ բացթողումների հաշվին, որոնք և դարձան ջրաքանակի դեֆիցիտի ծածկման հիմնական աղբյուրները:

2001-2012թթ. ընթացքում Սևանա լճից Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա ռոռոգման նպատակով ջրաքանակ հիմնականում բաց է թողնվել հունիսի առաջին տասնօրյակից

սկսած (բացառությամբ 2008 թվականի):

Մասնատիպ աննախադեպ պատկեր է նաև ոռոգման սեզոնում ռազմավարական և դոտացիոն նշանակություն ունեցող Ապարանի և Ազատի ջրամբարներում: Մասնավորապես 13.06.2012թ. դրությամբ Ապարանի ջրամբարի լցվածությունը կազմել է 31.81 մլն մ<sup>3</sup>, որը 2011 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 59.32 մլն մ<sup>3</sup>-ով, իսկ Ազատի ջրամբարի լցվածությունը 13.06.2012թ. դրությամբ կազմել է 60.57 մլն մ<sup>3</sup>, որը 2011 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 9.51 մլն մ<sup>3</sup>-ով:

2012 թվականի ընթացքում առկա են Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռի հնարավոր ռիսկեր:

**3. Ծրագրի հիմնական նպատակը և առաջնային խնդիրները**

Ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իրիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը, ինչպես նաև ամբողջական ջրամատակարարման համար համապատասխան պայմանների ստեղծումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրներն են՝

- 2012 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության իրականացումը՝ առավելագույնը սահմանելով մինչև 320 մլն մ<sup>3</sup>.
- որոշ ջրանցքների համար դոտացիոն ջրամբարներում կուտակված (Ապարանի և Ազատի ջրամբարներ) ջրի արդյունավետ օգտագործումը.
- Սևանա լճից բաց թողնված ջրի արդյունավետ օգտագործումը.
- հաշվետվության և վերահսկողության ապահովումը.
- օրենսդրական դաշտի ապահովումը:

**4. Ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումները**

Նկատի ունենալով փաստացի առկա վիճակը և եղանակային կանխատեսումները՝ ձեռնարկվել են համապատասխան աշխատանքներ՝ համակարգի բարձր պատրաստվածության ապահովման, խորքային պոմպերը և պոմպակայանները լրիվ դրվածքային արտադրողականությամբ պատրաստ վիճակում պահելու, ջրի կորուստների նվազեցման համար պահանջվող աշխատանքների իրականացման, ջրի վերցման և ջրի տրման կետերում հաշվառման մեխանիզմների կատարելագործման, ջրամբարներում ջրի կուտակման լրացուցիչ աշխատանքների իրականացման, ջրանցքներում ջրի բաշխման շուրջօրյա աշխատանքների կազմակերպման և այլ ուղղություններով:

Վերը նշված աշխատանքների իրականացմանը զուգընթաց՝ կպահանջվի Սևանա լճից լրացուցիչ ջրառ: Սևան-Հրազդան էներգետիկ-իրիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների (համաձայն ջրօգտագործողների ընկերությունների տված հայտերի) մակերեսը կազմում է շուրջ 39.14 հազ. հա, որոնց ոռոգման ջրի ծավալը, ըստ պահանջարկի, համակարգերի գլխամասերում և Հրազդան գետի հունի վրացման նպատակով Աղբյուրակի ջրամբարից մինչև Երևանյան լիճը գետի հունով բաց թողնվող ջրի ծավալը կկազմեն շուրջ 517.0 մլն մ<sup>3</sup>: Նշված ծավալի ջրի կանխատեսումային պահանջարկը նախատեսվում է ապահովել Հրազդան գետով, Ազատի և Ապարանի ջրամբարներով, Մխչյանի և Ռանչպար-Արևշատի պոմպակայանների համակարգով, ինչպես նաև Սևանա լճից բաց թողնվող ջրաքանակով՝ պահանջարկի և նշված ջրային համակարգերից հնարավոր ջրառի տարբերությունը (հաշվի առնելով նաև Սևան-Հրազդան համակարգի դերիվացիայի ջրանցքներում ֆիլտրացիոն կորուստները՝ 7 %-ի չափով) փոխհատուցելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածները, ինչպես նաև կանխատեսվող եղանակային պայմանները, 2012 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն ապահովելու նպատակով Սևանա լճից բաց թողնվող առավելագույն ջրաքանակը կկազմի 320 մլն մ<sup>3</sup>:

**5. Ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ հսկողությունը**

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բացթողումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած երկշաբաթյա կանխատեսումային առաջարկությունների հիման վրա:

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր տասնօրյակը մեկ Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց

թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

(հավելվածը լրաց. 22.06.12 ՀՕ-171-Ն)

Հավելված 4

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ**  
**ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**I. Ներածություն**

2014 թվականին Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետի երկրորդ պարբերության դրույթների:

Ծրագրում ներառված են տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում պետական քաղաքականության իրականացման հիմնական առաջնային ուղղությունները և անհրաժեշտ միջոցառումները:

Ծրագիրը նպատակաուղղված է արտեզյան հորիզոնների և Սևջրի ջրատվության նվազման, նշված տարածաշրջաններում ռոռզման պահանջարկի աճի, Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգում կորուստների դինամիկայի, ինչպես նաև Սևանա լճից սնվող ռոռզման համակարգերի ջրաղբյուրների (գ. Հրազդանի, Ապարանի և Ագատի ջրամբարների) ջրատվության աստիճանով պայմանավորված՝ Սևան-Հրազդան ռոռզման-էներգետիկ համակարգից սնվող ռոռզման համակարգերի սպասարկման տակ գտնվող հողատարածքների վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ռոռզումն ապահովելու անհրաժեշտությամբ և ռոռզման ջրի արդյունավետ մատակարարման ապահովման հիմքեր ստեղծելուն:

Ծրագիրը մշակված է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության առանձին տարածքներում ջրի սակավությունից, ինչպես նաև առկա եղանակային և կլիմայական պայմաններից:

**II. Ներկա վիճակի վերլուծություն**

Սևան-Հրազդան էներգետիկ-ռոռզման համակարգից սնվող ռոռզման համակարգերի սպասարկման տակ գտնվող ռոռզելի հողերի ջրամատակարարման և Սևանա լճի էկոհամակարգի համար պահանջվող ջրաշրջանառության ապահովման համար «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված է մինչև 170 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ: Եթե անցած տարիներին (բացառությամբ 2008 և 2012 թվականների, որոնք սակավաջուր տարիներ էին, և արդյունքում օրենքով նախատեսված չափաքանակները վերանայվեցին) նշված ջրաքանակը գրեթե բավարարում էր, ապա 2013 թվականի ընթացքում ավանդական ջրաղբյուրներում ջրի պակասի, արտեզյան հորիզոնների և Սևջրի ջրատվության նվազման, նշված տարածաշրջաններում ռոռզման պահանջարկի աճի, Սևան-Հրազդան արագահոս համակարգում կորուստների դինամիկայի, ինչպես նաև 2014 թվականին ռոռզման սեզոնի շուտ սկսման և Սևանա լճից սնվող ռոռզման համակարգերի ջրաղբյուրների (գ. Հրազդանի, Ապարանի և Ագատի ջրամբարների) ջրատվության սակավության հետ կապված հիմնախնդիրն էլ ավելի սրվեց:

Արարատյան դաշտի ստորգետնյա ջրերի ավազանում ջրի մակարդակի (ստատիկ ճնշման) անկման հետևանքով դադարում են գործել ինքնաշատրվանող հորեր և աղբյուրներ: Այդպիսի աղբյուրներից է սնվում և սկիզբ առնում Սևջուր գետը: Սևջուր գետը իր հերթին ջրաղբյուր է հանդիսանում ռոռզման ջրանցքների և պոմպային կայանների համար: Աղբյուրների ջրատվության կրճատվող շարունակական դինամիկայի հետևանքով Սևջուր գետի ջրատվությունը խիստ կրճատվել է: Ջրի սակավությունը դեֆիցիտ է ստեղծում ռոռզման համակարգերում: Դրանցից խոշորներն են Արևշատի I աստիճանի, Ակնալճի և Մեծամորի պոմպակայանները: Ստեղծված իրավիճակում 29 համայնքների 8180 հա հողատարածքների ռոռզումը վտանգված է Սևջուր գետի սակավաջրության պատճառով:

Ընդհանուր առմամբ Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի տարածքում առաջացած սակավաջրությունը մի շարք խնդիրներ է առաջացրել տվյալ տարածաշրջանի հողատարածքների ռոռզման ջրամատակարարման համար: Անցած տարիներին և ընթացիկ տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով մեծածավալ գումարներ են ծախսվել (շուրջ մեկ մլրդ դրամի չափով) առկա խնդիրների լուծման և ռոռզման ջրամատակարարման ապահովման (այն տեղերում, որտեղ հնարավոր է Սևանա լճի ջուրը ջօգտագործել) նպատակով հորատվել են տասնյակ խորքային



հորեր, տեղադրվել են պուրպուրյան սարքավորումներ, կառուցվել են ջրանցքներ, վերակառուցվել և կառուցվել են ջրընդունման ավազան և պուրպուրյան, սակայն դրանք բավարար չեն եղել բարձրացված հարցերի հիմնովին լուծման համար: Կատարված գնահատումների համաձայն՝ Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրության հետևանքով իրականացվող միջոցառումների կարգավորման համար, հաշվի առնելով նաև համակարգի պահուստային հնարավորությունները և համակարգում առկա խողովակների օգտագործումը, ներկայումս կպահանջվի ևս շուրջ 700 մլն Հայաստանի Հանրապետության դրամի ֆինանսավորում: Պետական ֆինանսական աջակցությամբ համապատասխան գործողություններ կատարվում են, սակայն խնդիրը դեռևս առկա է այն տեղերում, որտեղ այլընտրանքային ռեսուրսներ և հնարավորություններ չկան և միակ հնարավորությունը Սևանա լճի ջուրն է:

Համակարգի պահանջվող հատվածներում մի շարք խնայողական գործողություններ իրականացնելու շնորհիվ Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի տարածքում առաջացած սակավաջրությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ ծավալներն ապահովելու համար կպահանջվի Սևանա լճից բաց թողնել շուրջ 70.0 մլն մ<sup>3</sup> լրացուցիչ ջրաքանակ:

Առկա է նաև լուրջ խնդիր Սևան-Հրազդան էներգետիկ արագահոս համակարգում: Էներգետիկ համակարգ մուտք գործած և դուրս եկած ջրի ծավալների պարբերաբար կատարված վերլուծություններից պարզվել է, որ էներգետիկ արագահոս համակարգում հաշվարկային 7 տոկոս կորստի չափաքանակն ապացուցվել է նաև մի շարք ջրաչափական աշխատանքներով, որոնց արդյունքում պարզվել է, որ 1978 թվականից հաշվարկվող 7 տոկոս չափաքանակի փոխարեն էներգետիկ արագահոս համակարգում փաստացի կորուստը կազմում է առնվազն 18 տոկոսով կամ 11 տոկոսով ավել: Դա նշանակում է, որ էներգետիկ արագահոս համակարգից դեպի ոռոգման համակարգեր անցած ջրի ծավալը 2012 թվականի մայիս-սեպտեմբեր (Սևանից ջրի բաց թողնման ժամանակահատված) ամիսների ընթացքում հաշվարկայինից պակաս է եղել 42.7 մլն մ<sup>3</sup>-ով, որն անսպասելի դեֆիցիտ է առաջացնում ոռոգման համակարգում: Նույն բացասական գործընթացը շարունակվել է նաև 2013 թվականի ոռոգման շրջանի ընթացքում: Նախատեսվածից պակաս ջրի ծավալների մուտքը ոռոգման համակարգ լուրջ լարվածություններ է առաջացնում ջրապահովման գործընթացներում:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ստորգետնյա ջրերի մակարդակի շարունակական իջեցման գործընթացին: Դիտարկումներից առաջացել է կարծիք, որ ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցումը, բացի հայտնի բացասական հետևանքներից և խորքային հորերով էլեկտրաէներգիայի լրացուցիչ ծախսերից, բերում է նաև համապատասխան հողատարածքների ոռոգման պահանջարկի ավելացմանը, որը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային ագրարային համալսարանի ուսումնասիրությամբ: Գրունտային ջրերն ապահովում էին որոշակի խոնավության չափ հողի վերին շերտերում, մակարդակի իջեցումը բերել է խոնավության նվազման, ուստի և ոռոգման պահանջարկի ավելացման: Ընդ որում, գրունտային ջրերի մակարդակի իջեցման արդյունքում գետնաջրերից խոնավության սնուցման բացակայության պայմաններում 20-25 տոկոսով աճել են ոռոգման նորմերը և ջրումների քանակը՝ էսպես փոխելով գյուղատնտեսական մշակաբույսերի համար սահմանված ոռոգման նորմերը և ռեժիմները: Այդ առումով անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետևանքով ոռոգման պահանջարկի ավելացման չափաքանակները և նշված գործընթացների կանխատեսվող դինամիկան:

2014 թվականի բնակլիմայական և եղանակային պայմանները չնպաստեցին Ազատի և Ապարանի ջրամբարներում համապատասխան քանակությամբ ջրի ներհոսքի առաջացմանը և անհրաժեշտ քանակությամբ ջրի կուտակմանը: Բավական է նշել, որ 2014 թվականի մայիսի 30-ի դրությամբ Ապարանի ջրամբարի լցվածությունը (ընդհանուր տարողությունը 91.0 մլն մ<sup>3</sup>) կազմել է շուրջ 23.77 մլն մ<sup>3</sup> (2013 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել էր 50.53 մլն մ<sup>3</sup>), իսկ Ազատի ջրամբարի լցվածությունը (ընդհանուր տարողությունը 70.0 մլն մ<sup>3</sup>) նույն ժամանակահատվածում՝ 48.54 մլն մ<sup>3</sup> (2013 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել էր 51.44 մլն մ<sup>3</sup>): Միաժամանակ ջրասակավորությունը լուրջ խնդիրներ է առաջացրել՝ կապված Հրազդան գետի ջրատվության հետ: Ընդ որում՝ 2014 թվականի մայիսի 30-ի դրությամբ Հրազդան գետի ջրատվության օրական միջին ելքը կազմել է շուրջ 10.51 մ<sup>3</sup>/վրկ, այն դեպքում, երբ անցած տարվա նույն ժամանակահատվածում այն կազմել էր շուրջ 19.19 մ<sup>3</sup>/վրկ: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոտեխնիկական և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գետերի գարնանային վարարումների, ջրամբարների ջրալցվածության և Սևանա լճի մակարդակի ճշգրտված կանխատեսումները ևս վկայում են ընթացիկ տարվա ջրասակավորության վերաբերյալ: Հաշվի առնելով նշվածը՝ ընթացիկ տարվա եղանակային և բնակլիմայական գործոններով պայմանավորված առանձնահատկությունները մեղմելու նպատակով Սևանա լճից կպահանջվի ևս 30.0 մլն մ<sup>3</sup> ջրաքանակ:

2014 թվականի ընթացքում առկա են Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռի հնարավոր ռիսկեր, որոնց փոխհատուցման նպատակով հաջորդ տարիների ջրի բացթողումները պլանավորվում են՝ նկատի ունենալով նախորդ տարվա դեֆիցիտն առաջացնող, ինչպես նաև հետագա տարիներին Սևանա լճում դրական հաշվեկշիռն ապահովող ջրաքանակները:

**III. Ծրագրի հիմնական նպատակը և առաջնային խնդիրները**

Ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ ոռոգման համակարգից սնվող ոռոգման համակարգերի սպասարկման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով

անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը, ինչպես նաև ամբողջական ջրամատակարարման համար համապատասխան պայմանների ստեղծումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրներն են՝

- 2014 թվականին Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրությամբ, ինչպես նաև ընթացիկ տարվա առանձնահատկություններով պայմանավորված՝ Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության իրականացումը՝ առավելագույնը սահմանելով մինչև 270 մլն մ<sup>3</sup>.
- Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրության հետևանքով ջրապահովման մակարդակի բարձրացման միջոցառումների իրականացումը.
- առաջնահերթ ջրամբարաշինության (Կապսի, Մաստարայի և Վեդու) ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը.
- Եղվարդի ջրամբարի ֆինանսավորման հարցի լուծումը.
- որոշ ջրանցքների համար դատացիոն ջրամբարներում կուտակված (Ապարանի և Ազատի ջրամբարներում) ջրի արդյունավետ օգտագործումը.
- Սևանա լճից բաց թողնված ջրի արդյունավետ օգտագործումը.
- Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգում նորմատիվային կորուստների կրճատումը.
- հաշվետվության և վերահսկողության ապահովումը.
- օրենսդրական դաշտի ապահովումը:

**IV. Ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումները**

Նկատի ունենալով փաստացի առկա վիճակը և եղանակային կանխատեսումները՝ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան աշխատանքներ համակարգի բարձր պատրաստվածության ապահովման, խորքային պոմպերը և պոմպակայանները լրիվ դրվածքային արտադրողականությամբ պատրաստ վիճակում պահելու, ջրի կորուստների նվազեցման համար պահանջվող աշխատանքների իրականացման, ջուր վերցնելու և ջուր տալու կետերում հաշվառման մեխանիզմների կատարելագործման, ջրամբարներում ջրի կուտակման լրացուցիչ աշխատանքների իրականացման, ջրանցքներում ջրի բաշխման շուրջօրյա աշխատանքների կազմակերպման, Սևջուր գետի և Արարատյան դաշտի ստորգետնյա ավազանի սակավաջրության խնդրի լուծման, ինչպես նաև առաջնահերթ ջրամբարաշինության ծրագրերի մեկնարկման և այլ ուղղություններով:

Հաշվի առնելով վերը նշվածները, ինչպես նաև կանխատեսվող եղանակային պայմանները՝ 2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգումն ապահովելու նպատակով Սևանա լճից բաց թողնվող առավելագույն ջրաքանակը կկազմի մինչև 270 մլն մ<sup>3</sup>:

**V. Ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ հսկողությունը**

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված տարեկան և համալիր ծրագրերի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց թողնումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած մեկամսյա կանխատեսումային առաջարկությունների հիման վրա:

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր ամիսը մեկ Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բաց թողման տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

*(հավելվածը լրաց. 21.06.14 ՀՕ-81-Ն)*

Հավելված 5

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2017 թվականին Սևանա լճից ջրի բաց թողնման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է համաձայն Օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետի երկրորդ պարբերության դրույթների:

Ծրագիրը նպատակաուղղված է 2017 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի ենթակայությամբ գտնվող հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակ ապահովելուն:

**2. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Օրենքով ամրագրված է լճից ջրի բաց թողնման առավելագույն չափաքանակ՝ 170 մլն մ<sup>3</sup>: Ջրբացթողումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

Եղել են տարիներ, երբ լճից 170 մլն մ<sup>3</sup> ծավալով ջրբացթողնման դեպքում ոռոգման ջրի դեֆիցիտը լրացվել է Մխչյանի, Ռանչպարի, ինչպես նաև խորքային հորերի՝ պոմպերով մեխանիկական լրացուցիչ ջրարտադրության միջոցով, որն էլ ոռոգման ջրամատակարարման կազմակերպությունների համար առաջացրել է չնախատեսված նոր ֆինանսական պարտավորություններ:

Ըստ Հայաստանի Հանրապետության ԱԻՆ հիդրոմետ ծառայության տեղեկատվության՝ 2016 թվականի համեմատ 2017 թվականին գրանցվել է գետերի շուրջ 20 % սակավ ջրատվություն: 2017 թվականի հունիսի 20-ի դրությամբ (սույն օրենքի նախագծի մշակման ժամանակ) անցած տարվա նույն օրվա համեմատ ջրամբարներում առկա ջրի դեֆիցիտը կազմել է 189 մլն մ<sup>3</sup>, չնայած այն հանգամանքին, որ անցած տարվա համեմատ այս տարի ջրամբարներից այդ օրվա դրությամբ 35 մլն մ<sup>3</sup>-ով պակաս ջրօգտագործում է իրականացվել: Նշվածով պայմանավորված՝ 2017 թվականի հունիսի 20-ի դրությամբ Սևանա լճից ոռոգման նպատակով ջրբացթողումն արդեն կազմում է 58.5 մլն մ<sup>3</sup> անցած տարվա 14.3 մլն մ<sup>3</sup>-ի փոխարեն:

Առկա և առաջիկայում սպասվելիք բարձր ջերմաստիճանի հետ կապված՝ բնականաբար կմեծանա նաև ջրի պահանջարկը: Դա կպահանջի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ առավել ջրամատակարարում:

2016 թվականի հունիսի 19-ին 2015 թվականի նույն օրվա դրությամբ Սևանա լճի ջրի մակարդակն ավելացել է 16 սմ-ով (տարբերության առավելագույն ցուցանիշը 24.08.2016 թվականին գրանցվել է 32 սմ), իսկ 2017 թվականի հունիսի 19-ին 2016 թվականի նույն օրվա դրությամբ՝ ևս 18 սմ-ով:

**3. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրը նաև օրենքով սահմանված ոռոգման նպատակով լճից ջրի տարեկան բաց թողնման 170 մլն մ<sup>3</sup> չափաքանակի ավելացումն է՝ դարձնելով այն մինչև 270 մլն մ<sup>3</sup>:

Սույն ծրագրի մշակման համար առկա են հետևյալ հիմքերը.

- Սևան-Հրազդան ջրառի իշխման տարածքներում այս տարի նախորդ տարվա համեմատ Ապարանի և Ագատի ջրամբարներում ոռոգման ջրաքանակը պակաս է շուրջ 17 մլն մ<sup>3</sup>-ով, Հրազդան գետի ջրատվությունը՝ 40 մլն մ<sup>3</sup>-ով (2016 թվականին եղել է 150 մլն մ<sup>3</sup>, 2017-ի նույն ժամանակահատվածում՝ 110 մլն մ<sup>3</sup>).

- 2016 թվականին ևս 60 մլն մ<sup>3</sup> ջուր արտադրվել է Մխչյան և Ռանչպար պոմպակայաններով, որի ծախսը կազմել է 1.2 մլրդ դրամ:

Այսպիսով՝ Սևան-Հրազդան համակարգում առկա է 117 մլն մ<sup>3</sup> ջրի դեֆիցիտ անցած տարվա համեմատ: Նախորդ տարվա սցենարով ջրամատակարարում իրականացնելու դեպքում Մխչյան և Ռանչպար պոմպակայանները կարող են լրացնել այս դեֆիցիտի միայն 50%-ը, այդ իսկ պատճառով Սևանա լճից լրացուցիչ ջրառը դառնում է անհրաժեշտություն:

Խնդիրն առավել սուր բնույթ է ստանում, երբ Սևան-Հրազդան համակարգի կարիքներին գումարվում են Ախուրյան-Արաքս համակարգի խնդիրները: 2016 թվականի համեմատ Ախուրյանի ջրամբարը 105 մլն մ<sup>3</sup>-ով պակաս է լցվել (անցած տարի եղել է 545 մլն մ<sup>3</sup>, 2017 թվականին՝ 440 մլն մ<sup>3</sup>):

Ախուրյան-Արաքս համակարգի իշխման տակ գտնվող հողատարածքների ջրի պակասը լրացնելու միակ տարբերակը մեխանիկական ջրարտադրությունն է Արմավիրի տարածաշրջանի խորքային հորերի շահագործման միջոցով, որը կպահանջի առնվազն 1.2 - 1.3 մլրդ դրամի էլեկտրաէներգիայի ծախս:

2016 թվականի սցենարով աշխատելու, Սևանա լճից լրացուցիչ ջրառ չիրականացնելու դեպքում համակարգում առկա կմնան հետևյալ չլուծվող խնդիրները.

- Սևան-Հրազդան համակարգում՝ 50 մլն մ<sup>3</sup> ջրի դեֆիցիտ.

- Ախուրյան-Արաքս համակարգում՝ 105 մլն մ<sup>3</sup> ջրի դեֆիցիտ:

Այսպիսով՝ երկու համակարգերում էլ կունենանք թերոռոգում, որը կարող է հանգեցնել անկառավարելի ոլիսների, գյուղատնտեսական արտադրանքի վերջնարդյունքի կորստի՝ առ ոչինչ դարձնելով նաև մինչ այդ իրականացված

ջրամատակարարումը, ինչպես նաև շուրջ 130 հազ. հողօգտագործողների կատարած ծախսերն ու վճարումները:

Սևանա լճից լրացուցիչ 100 մլն մ<sup>3</sup> ծավալով ջրբացթողումները հնարավորություն կտան Սևան-Հրազդան ոռոգման համակարգի Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների շահագործման փոխարեն կատարելու մեխանիկական ջրարտադրություն Ախուրյան-Արաքս ոռոգման համակարգի իշխման տակ գտնվող Արմավիրի տարածաշրջանի տեղական խորքային հորերից, որի շնորհիվ համակարգում շուրջ 1.2 մլրդ դրամի լրացուցիչ էլեկտրաէներգիայի ծախս չի առաջանա:

Լճից մինչև լրացուցիչ 100 մլն մ<sup>3</sup> ծավալով ջրի բաց թողման ավելացումը, ըստ նախնական գնահատականների, հնարավորություն կտա նաև Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի հիդրոէլեկտրակայաններում լրացուցիչ արտադրել ևս շուրջ 97 մլն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա: Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների հասույթի և կատարած ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը կուղղվի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նպատակային ներդրումներ իրականացնելուն:

Լրացուցիչ ջրբացթողումները լճի ջրի մակարդակի վրա բացասական ազդեցություն չեն ունենա, քանի որ Օրենքի ընդունման պահին Սևանա լճի ջրի մակարդակը կազմել է 1896.32 մ: 2017 թվականի հունվարի 1-ին այն կազմել է 1900.46 մ: Այս նիշերի տարբերությամբ պայմանավորված, և, հաշվի առնելով Բայթիկ ծովի մակարդակի ճշգրտման/կոլերացիայով ընդունված 0,20 մ նիշի բարձրացման գործակիցը, Սևանա լճի ջրի մակարդակը Օրենքի ընդունումից հետո 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ փաստացի բարձրացել է 3.94 մ-ով:

Լրացուցիչ 100 մլն մ<sup>3</sup> ջրբացթողումը, ըստ հաշվարկների, կարող է հանգեցնել Սևանա լճի ջրի մակարդակի մինչև 8 սմ անկման, որի պարագայում նույնիսկ անցած տարվա նույն օրվա համեմատ կապահովվի շուրջ 10 սմ (18-8) Սևանա լճի ջրի մակարդակի բարձր նիշ: Նշվածով պայմանավորված՝ լրացուցիչ ջրբացթողումները չեն խախտի Օրենքով սահմանված Սևանա լճի ջրի մակարդակի դրական հաշվեկշռի պահպանման պայմանները:

Որակական առումով առաջարկվող փոփոխությունը նույնպես լճի վրա բացասական ազդեցություն չի ունենա՝ պայմանավորված լճի ջրի ծավալի ավելացմամբ և ջրհավաք ավազանում Մարտունի, Գավառ, Վարդենիս և Ջերմուկ քաղաքների կեղտաջրերի մաքրման կայանների գործարկմամբ:

**4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- 1) հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում.
- 2) ոռոգում իրականացնող կազմակերպություններում մեխանիկական ջրարտադրության փոխարինում ինքնահոսով և էլեկտրաէներգիայի մատով նոր պարտքերի չձևավորում:

**5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն (170 մլն մ<sup>3</sup>) չափաքանակից ավել բացթողումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած կանխատեսումային առաջարկությունների հիման վրա:

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր տասնօրյակը մեկ Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ Օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն (170 մլն մ<sup>3</sup>) չափաքանակից ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Էներգետիկայի բնագավառի լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր ամիս Հայաստանի Հանրապետության կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ Օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն (170 մլն մ<sup>3</sup>) չափաքանակից ավել բաց թողնված ջրաքանակի օգտագործման շնորհիվ արտադրված էլեկտրական էներգիայի քանակի և դրա հետ կապված կատարված վճարումների վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն Ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

*(հավելվածը լրաց. 06.07.17 ՇՕ-116-Ն)*

Հավելված N 6

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾՐԱԳԻՐ**

**2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՋՐԻ ԲԱՑԹՈՂՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԱՓԱՔԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2018 թվականին Սևանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխության վերաբերյալ ժամանակավոր ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակված է համաձայն «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետի երկրորդ պարբերության դրույթների:

Ծրագիրը նպատակաուղղված է 2018 թվականին Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի ենթակայությամբ գտնվող հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակ ապահովելուն:

**2. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) ամրագրված է լճից ջրի բացթողման առավելագույն չափաքանակ՝ 170 մլն մ<sup>3</sup>: Ջրբացթողումներն իրականացվում են Կառավարության ամենամյա որոշումներով ամրագրված ամենամյա չափաքանակների շրջանակներում՝ սահմանված կարգին համապատասխան:

2016 թվականի նորմալ ջրատվության տարվա համեմատ, ինչպես 2017 թվականը (Սևանա լճից բաց է թողնվել 266.757 մլն մ<sup>3</sup> ջուր), այնպես էլ 2018 թվականը դիտվել են սակավ ջրատվության տարիներ: 2018 թվականի հունիսի 15-ի դրությամբ, 2016 թվականի՝ որպես նորմալ ջրատվության տարվա նույն օրվա համեմատ, ջրամբարներում առկա ջրի դեֆիցիտը կազմել է 155 մլն մ<sup>3</sup>, իսկ Սևան-Հրազդան ոռոգման համակարգը սնող Ապարանի, Ագատի և Մարմարիկի ջրամբարներում՝ 35 մլն մ<sup>3</sup>:

Անխուսափելի է նաև ջրի դեֆիցիտ Սևան-Հրազդան համակարգը սնող Հրազդան գետի ջրատվությունում հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Սևան-Հրազդան համակարգի իշխման տակ գտնվող 36 հազ. հա հողատարածքների ջրապահովվածության հաշվարկներում նախատեսվել է Հրազդան գետի ջրատվությունն ամբողջ ոռոգման ժամանակահատվածում 165 մլն մ<sup>3</sup> (ինչպես 2016 թվականին), որից հուլիս-սեպտեմբեր ամիսներին՝ 110 մլն մ<sup>3</sup>: Սակայն գետերի բազմամյա ջրագրության տվյալների համաձայն՝ սակավաջուր տարում այդ ամիսներին Հրազդան գետի հոսքը կազմել է 5.8 մ<sup>3</sup>/վրկ (55-60 մլն մ<sup>3</sup>), առանձին տարիներին՝ շուրջ 70 մլն մ<sup>3</sup> կամ նախատեսվածից 40-45 մլն մ<sup>3</sup> պակաս: Այսպիսով, 2018 թվականին համակարգի ոռոգման ջրի դեֆիցիտը 2016 թվականի համեմատ կկազմի շուրջ 40 մլն մ<sup>3</sup>:

Սևանա լճից հունիսի 15-ի դրությամբ 2016 թվականին բաց է թողնվել 8.978 մլն մ<sup>3</sup>, 2017 թվականին՝ 52.231 մլն մ<sup>3</sup>, 2018 թվականին՝ 27.268 մլն մ<sup>3</sup> ջուր, իսկ Արփա-Սևան թունելով 2016 թվականին Սևանա լիճ է տեղափոխվել համապատասխանաբար 94.341 մլն մ<sup>3</sup>, 2017 թվականին՝ 87.876 մլն մ<sup>3</sup>, 2018 թվականին՝ 111.121 մլն մ<sup>3</sup> ջուր:

**3. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի հիմնական նպատակն է Սևան-Հրազդան էներգետիկ-իռիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող ոռոգելի հողատարածքների ոռոգումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ առաջնային հիմնական խնդիրը նաև օրենքով սահմանված ոռոգման նպատակով լճից տարեկան բացթողման 170 մլն մ<sup>3</sup> չափաքանակի ավելացումն է՝ այն դարձնելով մինչև 210 մլն մ<sup>3</sup>:

Լճից մինչև լրացուցիչ 40 մլն մ<sup>3</sup> ծավալով ջրբացթողման ավելացումը, ըստ նախնական գնահատականների, հնարավորություն կտա նաև Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի հեկ-երում լրացուցիչ արտադրելու ևս շուրջ 38 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա: Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունների հասույթի և կատարած ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը կուղղվի Կառավարության սահմանած նպատակային ներդրումներ իրականացնելուն:

**4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- 1) հողերին մատակարարվող ոռոգման ջրի դեֆիցիտի մեղմում.
- 2) ոռոգում իրականացնող կազմակերպություններում մեխանիկական ջրարտադրության մեծացում:

**5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բացթողումը պետք է իրականացվի Կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած կանխատեսումային առաջարկությունների հիման վրա:

Ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր տասնօրյակը մեկ Կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի

վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց թողնված ջրաքանակի վերաբերյալ:

Էներգետիկայի բնագավառում լիազորված պետական մարմինը յուրաքանչյուր ամիս Կառավարություն պետք է ներկայացնի համապատասխան հաշվետվություն՝ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքով հաստատված ծրագրի 6.1-ին կետով նախատեսված՝ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170 մլն մ<sup>3</sup>) ավել բաց թողնված ջրաքանակի օգտագործման միջոցով արտադրված էլեկտրական էներգիայի քանակի և դրա հետ կապված կատարված վճարումների վերաբերյալ:

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը սույն ծրագրի գործողության ընթացքում իրականացնում է փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացնում է Կառավարություն և Ազգային ժողով:

*(հավելվածը լրաց. 29.08.18 ՀՕ-373-Ն)*